ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«_____» _____20 ___թ.
No _____

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մեծարգո՛ պարոն Սիմոնյան,

Ի լրումն Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2026 թվականի ապրիլի 23-ի թիվ Մ-005255/2026 գրությանը կից ներկայացվում է «Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի 2025 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին» թիվ 156-Ա որոշումը:

Առդիր՝ «71» էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

X_____

Քաղաքականության մշակման և մեթոդաբանության բաժին
Կատարող՝ Հակոբ Մանուկյան, հեռ.՝ 060 840 830 (237)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2026 թվականի N 156-Ա

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**)

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Հանձնաժողովի 2025 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանմանը՝ սահմանված կարգով ապահովել Հանձնաժողովի 2025 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվության հրապարակումը մինչև սույն թվականի մայիսի 1-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**
2026 թ. ապրիլի 28
Երևան

Մրցակցության և սպառողների շահերի
պաշտպանության հանձնաժողով

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026

*Հանուն մրցունակ տնտեսության
և պաշտպանված սպառողի*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁ 3

2 ԿԱՐԵՎՈՐԸ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ 5

3 2025 ԹՎԱԿԱՆԸ ԹՎԵՐՈՎ 6

4 ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 10

5 ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 16

6 ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 31

7 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 40

8 ՄՍՇՊՀ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 50

9 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 51

10 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

10.1. Հանձնաժողովի կողմից պատասխանատվության ենթարկված տնտեսավարող սուբյեկտներն ու պետական մարմինները 53

10.2. Ֆինանսական հաշվետվություն 67

10.3. Հանձնաժողովի կառուցվածքի գրաֆիկ 69

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄՍՇՊՀ նախագահ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի 2025 թվականի հիմնական առաջնահերթությունը կապված էր սպառողների համակարգի ամբողջականացման և շարունակական զարգացման հետ: Այս իմաստով մեր համար առաջին կարևոր արձանագրումը 2025 թվականի հուլիսի 3-ին Ազգային ժողովի կողմից ընդունված և օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի և Էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ մշակված օրենսդրական բարեփոխումներն են: Այս բարեփոխումների ընդունումն անկյունաքարային էր սպառողների շահերի իմաստով, քանի որ առաջին հերթին ամրագրվեց սպառողների **ազատ ընտրության իրավունքը՝ որպես հիմնարար իրավունք:**

Դրանից զատ օրենսդրական կարևոր ձեռքբերում էր նաև Հանձնաժողովի դերի ամրագրումը՝ **որպես սպառողների շահերի պաշտպանության կենտրոնական և կոնտակտային մարմին**: Այս փոփոխության արդյունքում այժմ ցանկացած սպառող հնարավորություն ունի իր խնդիրների վերաբերյալ դիմում ներկայացնելու միասնական մարմին՝ ի դեմս **Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի**:

Այսուհետ սպառողը Հայաստանում լիարժեք իրավունքների կրող է, որի ազատ ընտրությունը պաշտպանված է օրենքով: Սպառողների նկատմամբ մոլորեցնող, անարդար կամ ագրեսիվ առևտրային գործելակերպը հստակ արգելված է, և սպառողների շահերի պաշտպանության համար պետությունը ստեղծել է **գործուն, արագ արձագանքող և կանխարգելիչ մեխանիզմներ**: Գնի թափանցիկ ցուցադրումից մինչև անարդար վարքագծի արգելք և հստակ պատասխանատվության սահմանում՝ ձևավորվել է մի միջավայր, որտեղ սպառողների շահերի պաշտպանությունն այլևս ընտրովի

չէ, այլ համակարգային: Հանձնաժողովի այս աշխատանքները կապված են նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով Հայաստանի Հանրապետության համար սահմանված պարտականությունների իրականացման հետ:

Վերադառնալով սպառողների շահերի պաշտպանության ոլորտում Հանձնաժողովի իրականացրած գործողություններին՝ կարևոր է նաև անդրադառնալ 2025 թվականին սպառողների համար ներդրված Հանձնաժողովի հետ հաղորդակցության նոր գործիքներին: Հավատարիմ մնալով հասարակության հետ հաղորդակցության **թափանցիկ, հարմար և արդյունավետ** մեխանիզմների ձևավորման գաղափարախոսությանը՝ Հանձնաժողովը գործարկել է **«Սպառողի օգնական»** թվային գործիքը:

Այս հարթակը թույլ է տալիս ցանկացած սպառողի իր ցանկացած խնդրով օպերատիվ և հեշտ եղանակով դիմել Հանձնաժողովին: Հանձնաժողովը իր հերթին, օգտագործելով հենց նույն հարթակում առկա տեխնիկական միջոցները, խնդիրը փոխանցում է այն տնտեսավարող սուբյեկտին, որին այն վերաբերում է: Այս պահին կարող ենք արձանագրել, որ խնդիրների բացարձակ մեծամասնությունը իր լուծումը գտնում է տնտեսավարող սուբյեկտներին դրանց մասին հայտնելու փուլում՝ **առավելագույնը 14 օրում**:

Այսուհետ Հայաստանում յուրաքանչյուր սպառող կարող է վստահ լինել՝ իր ընտրությունը պաշտպանված է, իր իրավունքները՝ երաշխավորված, իսկ պետությունը՝ իր կողքին:

Մրցակցային միջավայրի զարգացման մասով Հանձնաժողովը հանձնառու է մնում աջակցել Հայաստանի թվային վերափոխման օրակարգին՝ իր լիազորությունների շրջանակներում էլ ավելի պարզ և հասանելի դարձնելով թվային ծառայությունների ոլորտը: Թվայնացման դարաշրջանը, ինչպես ցանկացած նոր գործընթաց, իր հետ բերում է թե՛ նոր հնարավորություններ, թե՛ նոր ռիսկեր: Թվային շուկաները ձևավորում են նոր մրցակցային միջավայր՝ իրեն բնորոշ մոտեցումներով և առանձնահատկություններով: Նման իրավիճակը պահանջում է **մրցակցային կարգավորումների ու տրամաբանության վերաիմաստավորում և կատարելագործում**: Այս ուղղությամբ Հանձնաժողովն իրականացրել է լայնածավալ գործընթացներ՝ կապված թե՛ մեթոդաբանական բազայի լավարկման և թե՛ միջազգային համագործակցության խորացման հետ: Արդեն 2026 թվականին Հանձնաժողովը հետամուտ կլինի թվային վերափոխման օրակարգի հետևողական խթանմանը և դրա հետ կապված **մրցակցային ռիսկների արդյունավետ և ժամանակին հասցեագրմանը:**

Անդրադառնալով Հանձնաժողովի 2026 թվականի առաջնահերթություններին՝ մենք ամրագրել ենք հետևյալ կարևոր ուղղությունները՝ սպառողների շահերը պաշտպանող համակարգի ամբողջական կայացում, Հանձնաժողովի ապագա տարիների գործունեության ռազմավարական մոտեցումների վերանայում, թվային գործիքակազմի կատարելագործում և ընդլայնում:

ԿԱՐԵՎՈՐԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովն ինքնավար մարմին է՝ կազմված 7 անդամից (նախագահ և 6 անդամ), որոնց նշանակում է Ազգային ժողովը:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ

Հանձնաժողովն ապահովում է տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, բարեխիղճ մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ միջավայրը և իրականացնում է սպառողների շահերի պաշտպանությունը:

Հանձնաժողովը սպառողների շահերի պաշտպանություն իրականացնող կենտրոնական մարմինն է:

Հանձնաժողովի գործունեության գլխավոր նպատակակետը ազատ տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության ապահովումն է տնտեսության զարգացման և երկրի առաջընթացի համար:

2025 ԹՎԱԿԱՆԸ ԹՎԵՐՈՎ

ԿԱՅՔԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒԳԱՆՔԻ ՉԱՓԸ (ԴՐԱՄ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՎԱԾ ՏՈՒԳԱՆՔԻ ՉԱՓԸ (ԴՐԱՄ)

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ



ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ

2022	2023	2024	2025
54	64	57	70
			1-ը՝ արգելված

Իրավախախտման վերաբերյալ վարույթներ	2022	2023	2024	2025
Հարուցված	142	133	277	258
Եզրափակված	151	174	285	265

Հանձնաժողովի ստացած զանգերը՝ ըստ բնույթի և բովանդակության, 2025թ.

Զանգահարողների կազմը



1506

ԶԱՆԳ

Հանձնաժողովի թեժ գծի միջոցով սպասարկված հարցումների և բողոքների տարեկան քանակը

Զանգերի բնույթը

Հարցումներ 67.8%

Բողոքներ 20.6%

Զանգերի բաշխվածությունը՝ ըստ բովանդակության

Թեժ գծի միջոցով ստացված զանգերի բովանդակությունը	Քանակ
Բովանդակային, այդ թվում՝	**445**
ապրանքների հետ կապված հարցեր (բնութագրիչներ, պատվեր, առաքում, ետվերադարձ)	146
ապրանքի միավորի գին և գնապիտակներ	45
գյուղմթերքների դիմաց ուշ վճարումներ	26
զեղչեր, ակցիաներ և գների փոփոխություն	115
Շփոթություն և մոլորեցնող գովազդ	20
Համակետրոնացումներ	93
Ընթացակարգային, այդ թվում՝	**684**
ընթացիկ վարույթների շրջանակում Հանձնաժողովի հետ հաղորդակցում	571
Հանձնաժողովին դիմելու ընթացակարգերի վերաբերյալ հարցեր	10
"Սպառողի օգնական" հարթակով մուտքագրված բողոքի և դրա հետագա ընթացքի հետ կապված հարցեր	68
Հանձնաժողովի կազմակերպած միջոցառումներին մասնակցության հետ կապված հարցեր	35
Տեղեկատվական, այդ թվում՝	80
օրենսդրական կարգավորումներ	58
համակենտրոնացման հայտարարագրում և անձանց խումբ	19
հարցացրույցի հրավեր	3
Տեխնիկական, այդ թվում՝	141
կայքում գրացման, առցանց դիմումների և փաստաթղթերի մուտքագրման մասով խնդիրներ	120
"Սպառողի օգնական" հարթակում գրանցման և դիմումի մուտքագրման խնդիրներ	21
Այլ զանգեր	156

Իրավախախտումների պատկերը և ընդունված որոշումները 2025-ին

Մրցակցության պաշտպանություն

129

Տնտեսավարող սուբյեկտներ

պատասխանատվության են ենթարկվել մրցակցային օրենսդրության խախտումների համար

Սպառողների շահերի պաշտպանություն

105

Տնտեսավարող սուբյեկտի

նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ սպառողների իրավունքները խախտելու համար

Նշանակված տուգանքի և բյուջե մուտքագրված գումարի չափը

56%-ը՝ 1,1 մլրդ
Մուտքագրվել է բյուջե

Ընդունված վերջնական որոշումներ



ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Աննա Պետրոսյան

«Բիզնես մշակույթի զարգացմանը և արդար մրցակցության խթանմանը նպաստելու նպատակով 2025 թվականին Հանձնաժողովը կենտրոնացել է գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային գործողությունների բացահայտման վրա՝ կիրառելով նաև նախադեպային լուծումներ:

Շուկայում անդառնալի բացասական հետևանքների կանխարգելման, ինչպես նաև համաչափ վերահսկողության ապահովման նպատակով Հանձնաժողովին ընձեռվել է միջանկյալ միջոցներ կիրառելու հնարավորություն՝ ապահովելով շուկայի ժամանակին և արդյունավետ պաշտպանություն»:

Օրենսդրական փոփոխությունները թույլ են տվել Հանձնաժողովին կիրառել միջանկյալ միջոցներ՝ կանխարգելելու շուկայում անդառնալի բացասական հետևանքները

Միջանկյալ միջոցների կիրառման հնարավորության բացակայությունը նախկինում մի շարք դեպքերում սահմանափակում էր Հանձնաժողովի կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության գործառույթների իրականացման արդյունավետությունը: Մասնավորապես՝ հասարակական հարաբերությունների արագ զարգացման և մրցակցության ու սպառողների շահերի պաշտպանություն իրականացնող մարմինների համար ծագող բազմաբևեռ մարտահրավերներին արագ արձագանքելը հաճախ անհնար է լինում պայմանավորված նշված մարմինների ռեսուրսներով, քննության

Ի գիտություն

Ընկերությունը կհամարվի գերիշխող դիրք ունեցող, եթե այն ունի շուկայի առնվազն 1/3 մասնաբաժին:

Ընկերությունները կարող են համարվել գերիշխող դիրք ունեցող նաև այն դեպքերում, երբ.

1) 2 ընկերություններ միասին ունեն շուկայի առնվազն 1/2 մասնաբաժին, կամ
2) 3 ընկերություններ միասին ունեն շուկայի առնվազն 2/3 մասնաբաժին:

իրականացման և գործի փաստական հանգամանքների բացահայտման ու ապացուցման բեռի բաշխման կանոնների առանձնահատկություններով, այնինչ միջանկյալ միջոցները էական նշանակություն ունեն հատկապես Հանձնաժողովի կանխարգելիչ գործառույթի իրականացման և շուկայում մրցակցության և սպառողների շահերի արդյունավետ պաշտպանության համար: Առանց միջանկյալ միջոցների կիրառման Հանձնաժողովը երբեմն չի կարող արագ և արդյունավետ արձագանքել՝ կանխարգելելով հնարավոր իրավախախտումների անդառնալի բացասական ազդեցությունը ապրանքային շուկաների վրա:

Միջանկյալ միջոցների կիրառման հնարավորությունը դիտարկելիս հաշվի է առնվել միջազգային լավագույն փորձը, որի համաձայն մրցակցությանը լրջագույն և անվերականգնելի վնասի վտանգի հետևանքով առաջացած անհետաձգելի դեպքերում Հանձնաժողովը, սեփական նախաձեռնությամբ, խախտումը առերևույթ (prima facie) հիմնավորող հանգամանքների վրա կարող է կիրառել միջանկյալ միջոցներ:

Այսպիսով՝ համաձայն 2025 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունների՝ տնտեսական մրցակցության բնագավառի մի շարք իրավախախտումների առերևույթ հատկանիշներ պարունակող գործողության կամ վարքագծի հետևանքով հնարավոր անդառնալի կամ ծանր հետևանքները կանխելու նպատակով Հանձնաժողովը կարող է ընդունել միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ որոշում և դադարեցնել իրավախախտման առերևույթ հատկանիշներ պարունակող վարքագիծը մինչև վարույթով վերջնական որոշման կայացումը՝ վերականգնելով մինչև իրավախախտման առերևույթ հատկանիշներ պարունակող վարքագիծը եղած դրությունը կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված այլ ձևերով, ինչպես նաև կասեցնել գնման արդյունքում պայմանագրի կնքման գործընթացը կամ դրա գործողությունը: Ընդ որում միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ որոշում կարող է ընդունվել Հանձնաժողովի կողմից իրավախախտման վերաբերյալ հարուցված վարույթի ցանկացած փուլում, և այն գործում է մինչև վարույթը եզրափակող ակտն ուժի մեջ մտնելը:

ՀԴՄ սպասարկման շուկայում մրցակցության վերականգնում. նախադեպային լուծում

Հանձնաժողովը «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Տերմինալ սերվ» և «Քյու տերմինալ» ՍՊ ընկերությունների (այսուհետ այստեղ նաև՝ **«Տոչ-մաստեր» ընկերություն, «Իննթեք» ընկերություն, «Սմարթ սոլուշնս» ընկերություն, «ՀԴՄ շտրիխ» ընկերություն, «Մերի-Քրիստ» ընկերություն, «Տերմինալ սերվ» ընկերություն և «Քյու տերմինալ» ընկերություն, իսկ համատեղ նաև՝ Ընկերություններ)** կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել է վարույթ՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների սպասարկման ծառայությունների մատուցման

ոլորտում հնարավոր խախտումների վերաբերյալ:

Վարույթի շրջանակում Հանձնաժողովն արձանագրել է, որ վերոնշյալ ընկերությունները, որոնք գործունեություն են ծավալել ՀԴՄ և ՀԴՄ-ՊՈՍ (POS) տերմինալների իրացման և սպասարկման ոլորտում («Տերմինալ սերվ» ընկերությունը՝ միայն սպասարկման ոլորտում), հանդիսանում են անձանց խումբ (այսուհետ համատեղ այստեղ նաև՝ Անձանց խումբ) և «ՀԴՄ և ՀԴՄ-ՊՈՍ տերմինալների սպասարկում» ապրանքային շուկայում ունեցել են գերիշխող դիրք: Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Անձանց խումբը 2024 թվականին և 2025 թվականի հունվարից մայիս ներառող ժամանակահատվածում ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման շրջանակում գնորդ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ սահմանել և կիրառել է չհիմնավորված բարձր և խտրական գներ, ինչի հետևանքով ՀԴՄ ծառայություններից օգտվող բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ կրել են ավելորդ ֆինանսական բեռ:

Վարույթի արդյունքում Հանձնաժողովը Անձանց խմբի նկատմամբ ՀԴՄ սպասարկման ծառայությունների ձեռքբերման համար չհիմնավորված բարձր, ինչպես նաև խտրական գներ սահմանելու և կիրառելու համար, ինչը հանգեցրել է գերիշխող դիրքի չարաշահման, նշանակել է 288 828 000 դրամ տուգանք, ինչպես նաև հանձնարարել է՝

- դադարեցնել չհիմնավորված բարձր և խտրական գների կիրառումը,
- վերադարձնել կամ հաշվանցել տնտեսավարող սուբյեկտներից գանձված հավելյալ գումարները՝ Հանձնաժողովի կողմից նշված ժամանակահատվածի ընթացքում մատուցված ՀԴՄ սպասարկման ծառայությունների մասով:

Այսպիսով՝ Հանձնաժողովը կիրառել է նաև մի մեխանիզմ, որի շրջանակում պարտավորեցրել է 2024 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ը ՀԴՄ սպասարկման ծառայություններ ձեռք բերած տնտեսավարող սուբյեկտներից հավաքագրված հավելյալ հասույթը վերադարձնել կամ հաշվանցել վերջիններիս՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից սահմանված բանաձևը:

Այս լուծումը ուղղակի և շոշափելի ազդեցություն է ունեցել շուկայի վրա.

- տնտեսավարող սուբյեկտներին վերադարձվում է անհիմն գանձված ավել գումարը՝ վերականգնելով ծառայությունների արդար գնագոյացումը,
- ձևավորվում է հստակ ուղերձ շուկայի բոլոր մասնակիցներին, որ գերիշխող դիրքի չարաշահումը ոչ միայն պատժվում է, այլև ուղղվում են դրա հետևանքները:

Այս որոշմամբ Հանձնաժողովը ոչ միայն արձանագրել է իրավախախտումը, այլ նաև կիրառել է տնտեսության համար արդյունավետ և համակարգային լուծում, որը նպաստում է արդար մրցակցության ամրապնդմանը:

Կրթության և առողջապահության ոլորտում մրցակցության ապահովմանն ուղղված գործողություններ

Հանձնաժողովը վարույթ է հարուցել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ այստեղ՝ Նախարարություն) կողմից գնման ընթացակարգերի շրջանակներում հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և գնման գործընթացների կազմակերպման ծառայությունները (այսուհետ այստեղ՝ Ծառայություններ) մեկ չափաբաժնում խմբավորելու, ինչպես նաև հրավերով նախատեսված պահանջների սահմանման առնչությամբ դրսևորած վարքագծում պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

ՀՀ տարբեր մարզերի համար նախատեսված Ծառայությունները Նախարարության կողմից մեկ մարզի շրջանակում խմբավորվել են մեկ չափաբաժնում և այդ գնման գործընթացների հրավերներով, ի թիվս այլնի, սահմանվել է խտրական պահանջ, որի համաձայն մասնակիցը պետք է հայտ ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի Ծառայություններից յուրաքանչյուրի մասով նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր, ինչպես նաև բավարարի աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների մասով ներկայացված պահանջերին: Այդպիսի պահանջը էապես սահմանափակել է գնման ընթացակարգերի շրջանակում նման ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների հնարավոր մասնակցությունը, ինչի արդյունքում գնման ընթացակարգերի շրջանակում որևէ տնտեսավարող սուբյեկտ չի մասնակցել:

Վարույթի արդյունքում Հանձնաժողովը Նախարարության կողմից գնման ընթացակարգերի շրջանակում Ծառայությունները մեկ չափաբաժնում խմբավորման, ինչպես նաև գնման ընթացակարգերի հրավերներով խտրական պայմանների սահմանման և հնարավոր տնտեսավարող սուբյեկտների կողմից վերոնշյալ գնման ընթացակարգերին մասնակցելու հնարավորության սահմանափակման վար-

Ի գիտություն

Պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունները վերաբերում են պետական մարմինների կողմից իրականացվող ցանկացած գործողություններին, որոնք վնասում են մրցակցությունը:

Պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողություններ են՝ խտրական պայմանների սահմանումը և կիրառումը, ձեռնարկատիրական գործունեության սահմանափակումը, այլ պետական մարմինների կամ տնտեսավարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հետ հակամրցակցային համաձայնությունները և այլն:

քագիծը որակել է որպես տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների սահմանման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության սահմանափակման դրսևորմամբ պետական մարմնի հակամրցակցային գործողություն:

Արդյունքում՝ Հանձնաժողովը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը տվել է նախազգուշացում՝ հստակ ուղերձով, որ պետական գնումների շրջանակում մրցակցության արհեստական սահմանափակումներն անթույլատրելի են:

Այս վարույթը կարևոր ազդակ է պետական համակարգի համար՝ ապահովելու, որ հանրային միջոցների ծախսման գործընթացները լինեն թափանցիկ, մրցակցային և բաց բոլոր հնարավոր մասնակիցների համար՝ նպաստելով պետական գնումների արդյունավետությանը և տնտեսության առողջ զարգացմանը, ինչպես նաև արդյունքում ապահովվել է Ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների համար քննարկվող գնման գործընթացներին հավասար պայմաններում մասնակցելու հնարավորությունը:

Հանձնաժողովը վարույթ է հարուցել՝ պարզելու համար, թե արդյոք Առողջապահության նախարարության (այսուհետ այստեղ՝ Նախարարություն) վարքագծում առկա են արգելված պետական օժանդակության տրամադրման և/կամ պետական մարմնի հակամրցակցային գործողությունների հատկանիշներ: Խնդիրը վերաբերում է նրան, որ նույնանման ծառայությունների մատուցման դեպքում «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ այստեղ՝ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ընկերություն) ծառայությունների դիմաց փոխհատուցում է տրամադրվել այլ պայմաններով, քան «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ այստեղ՝ «Շտապբուժօգնություն» ընկերություն):

Վարույթը նախաձեռնվել է «Շտապբուժօգնություն» ընկերության հաղորդման հիման վրա, որը հայտնել է, որ Երևան քաղաքում շտապ բժշկական օգնության կանչերի միջինացված գները տարիներ շարունակ չեն փոփոխվել այն դեպքում, երբ հանրապետական շտապօգնության ծառայության համար նույնատիպ կանչերի դիմաց սահմանված են այլ՝ ավելի բարենպաստ փոխհատուցման պայմաններ: Դիմողի գնահատմամբ՝ այդ տարբերակման համար չեն ներկայացվել հստակ հաշվարկներ կամ հիմնավորված միասնական մեթոդական մոտեցում, ինչի հետևանքով ստեղծվել են անհավասար մրցակցային պայմաններ, որոնք կարող են հասցնել «Շտապբուժօգնություն» ընկերության սնանկացմանը:

Հանձնաժողովը հարուցված վարույթի շրջանակում արձանագրել է, որ Նախարարությունը չի ներկայացրել այն հաշվարկները և չափորոշիչները, որոնց հիման վրա ձևավորվել են փոխհատուցման տարբեր չափերը՝ թե՛ «Շտապբուժօգնություն» ընկերության, թե՛ մարզերում գործող շտապ օգնության ծառայությունների համար: Միևնույն ժամանակ, առանց համընդհանուր և օբյեկտիվ մոտեցման, միայն «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ընկերության համար վերանայվել և բարելավվել են փոխհատուցման պայմանները:

Վարույթի արդյունքում Նախարարության կողմից միայն «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության մասով ծառայությունների մատուցման դիմաց տրամադրվող փոխհատուցման չափերի վերանայումը և փոփոխությունը որակվել է որպես արգելված պետական օժանդակություն, իսկ տարբերակված փոխհատուցման գներ սահմանելու Նախարարության վարքագիծն այն պարագայում, երբ դրա հիմքում առկա չեն հստակ և օբյեկտիվ չափորոշիչներ, հաշվարկներ և հիմնավորումներ, որակվել է որպես տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների սահմանման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության սահմանափակման դրսևորմամբ պետական մարմնի հակամրցակցային գործողություն:

Արդյունքում՝ Հանձնաժողովը Առողջապահության նախարարությանը տվել է նախազգուշացում և պարտավորեցրել է.

- դադարեցնել արգելված պետական օժանդակությունը,
- սահմանել շտապ բժշկական օգնության ծառայությունների դիմաց փոխհատուցման հստակ, թափանցիկ և օբյեկտիվ չափորոշիչներ,
- վերանայել փոխհատուցման չափերը՝ ապահովելով հավասար պայմաններ բոլոր շտապ օգնության ծառայություններ մատուցող սուբյեկտների համար:

Այս միջամտությամբ Հանձնաժողովը կարևոր քայլ է արել՝ ուղղված շտապ բժշկական օգնության ոլորտում արդար մրցակցության, ֆինանսական կայունության և ծառայությունների շարունակականության ապահովմանը, ինչը կարևոր նշանակություն ունի ինչպես ոլորտի աշխատակիցների, այնպես էլ հանրության համար: Կարևոր է ընդգծել, որ սոցիալական կենսական ոլորտներում մրցակցության պաշտպանությունը նույնքան կարևոր է, որքան առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու որակը:

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շուշան Սարգսյան

«Մրցակցության գնահատումը Հանձաժողովի գործունեության առանցքային ուղղություններից է, որն արտացոլում է շուկաների մրցակցային միջավայրը և ներքին դինամիկան:

Հանձնաժողովը 2025 թվականին մրցակցության գնահատման արդյունքում թույլատրել է համակենտրոնացումներ հեռահաղորդակցության, արևային էներգիայի արտադրության, տեղեկատվական տեխնոլոգիաների և մի շարք այլ ոլորտներում: Ոլորտային ուսումնասիրություններն անդրադարձել են առողջապահական բնագավառին և նորակառույց շենքերում բնակարանի ձեռքբերման հիմնահարցերին՝ նպատակ ունենալով բացահայտել հասարակության լայն շերտերին հուզող խնդիրները:

Տնտեսական իրականության խորքային ընկալման այսպիսի վերլուծություններն աջակցում են նաև մրցակցային սկզբունքներով հավասարակշռված կարգավորումների մշակմանը ի նպաստ տնտեսության կայուն զարգացման և սպառողների բարեկեցության»:

Օրենսդրական փոփոխություններով, ի թիվս այլնի, մի շարք կարգավորումներ են նախատեսվել՝ ուղղված համակենտրոնացումների վերահսկման ոլորտի կատարելագործմանը. մասնավորապես՝ հստակեցվել են համակենտրոնացում չհամարվող վերակազմակերպումների, գործողությունների կամ գործարքների շրջանակը, արագացված վարույթ կիրառելու դեպքում չհայտարարագրված համակենտրոնացումների հիմքով հարուցված վարույթի իրականացման ժամկետները, հայտարարագրման ենթակա համակենտրոնացումն արգելելու հիմքերը, չհայտարարագրված համակենտրոնացման իրավախախտման հատկանիշները, ինչպես նաև հայտարարագրման ենթակա համակենտրոնացման գնահատման

Ի գիտություն

Համակենտրոնացումների նկատմամբ Հանձնաժողովի վերահսկողությունն անհրաժեշտ է համակենտրոնացման հետևանքով մրցակցային իրավիճակը գնահատելու և սպառողների շահերի վնասման ռիսկը պարզելու համար:

Համակենտրոնացումների գնահատումը թույլ է տալիս պատկերացում կազմել շուկայի դինամիկայի, մրցակցության համար հնարավոր ռիսկերի մասին, ինչի արդյունքում Հանձնաժողովը կարողանում է կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել՝ այդ ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

շրջանակում մասնակիցների կողմից հայտարարագրում կամ վարույթի ընթացքում կեղծ, ոչ հավաստի, ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ տեղեկատվություն ներկայացնելու կամ Հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկատվությունը չներկայացնելու հետևանքները:

Կատարված փոփոխությունների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների համար ընթացակարգերը դարձել են առավել հստակ և հեշտ կիրառելի, ինչը հնարավորություն է տալիս նրանց ավելի հեշտ կողմնորոշվել սահմանված իրավական պահանջներում և կազմակերպել իրենց գործարքները առավել կանխատեսելի, արդյունավետ և արագացված ձևով:

Հանձնաժողովի կողմից համակենտրոնացումների գնահատումը կանաչ ապագայի և կայուն զարգացման համատեքստում

«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» փակ բաժնետիրական (օգտագործվող ապրանքային նշաններն են՝ Coca-Cola, Fanta, Sprite, Bonaqua, Burn, Dobry Pulpy, Fuzetea, Finlandia, Schweppes, The Maccallan, Caffe Vergnano, Three Cents, Jack and Coke, Naked Malt, The Famous Grouse), «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» սահմանափակ պատասխանատվությամբ (օգտագործվող ապրանքային նշաններն են՝ Pepsi, 7UP, Lays, J7, Xteam, Դորիտոս, Միրինդա) և «Երևանի Կոնյակի Գործարան» փակ բաժնետիրական (օգտագործվող ապրանքային նշանն է՝ ARARAT) ընկերությունները (այսուհետ՝ այստեղ նաև համապատասխանաբար **«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ընկերություն, «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ընկերություն, «Երևանի Կոնյակի Գործարան» ընկերություն, միասին նաև՝ Ընկերություններ)** դիմել են Հանձնաժողով՝ խնդրելով թույլատրել նոր իրավաբանական անձի՝ «ԷԿՈՓԱԿ Հայաստան Արտադրողների Պատասխանատվության» հիմնադրամի (այսուհետ այստեղ նաև՝ **Հիմնադրամ**) հիմնադրումը, որը գործելու է որպես ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտ:

Ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Հիմնադրամի առաքելությունն ուղղված է լինելու փաթեթավորման թափոնների կառավարման համակարգի զարգացմանը Հայաստանում: Որպես առաջնային նպատակ՝ նախատեսվում էր 2025 թվականին իրականացնել պիլոտային ծրագիր Կոտայքի մարզի Հրազդան համայնքում՝ ներդնելով փաթեթավորման թափոնների հավաքման, տեսակավորման և վերամշակման համապարփակ համակարգ: Ընդ որում, որպես Հիմադրամի շահառուներ կարող են հանդես գալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքները:

Հիմնադրամի գործունեությունը ներառում է նաև հետազոտությունների իրականացում, խորհրդատվության տրամադրում, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում և կիրառման խթանում, ինչպես նաև շրջանաձև տնտեսության և արտադրողի ընդլայնված

պատասխանատվության սկզբունքների ներդրման աջակցություն: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների տարածմանը և բնակչության իրազեկվածության բարձրացմանը:

Որպես արդյունք՝ Հանձնաժողովը թույլատրել է նույն ոլորտում գործունեություն ծավալող Ընկերությունների համակենտրոնացումը՝ նպաստելով բնապահպանական նպատակների իրագործմանը՝ խթանելով շրջակա միջավայրի պահպանությունը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և թափոնների կրճատմանը՝ որպես երկարաժամկետ ներդրում Հայաստանի կանաչ ապագայի ձևավորման գործում:

Համակենտրոնացումների գնահատումը հեռահաղորդակցության ոլորտում

2025 թվականին Հանձնաժողովի կողմից գնահատվել է «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ այստեղ նաև՝ «Վիվա Արմենիա» ընկերություն) կողմից «ՋիԷնՍի-Ալֆա» փակ բաժնետիրական ընկերութան (այսուհետ այստեղ նաև՝ «ՋիԷնՍի-Ալֆա» ընկերություն) կանոնադրական կապիտալի 100 տոկոս փայաբաժնի ձեռքբերման գործարքը:

Համակենտրոնացման գնահատման վարույթի շրջանակում Հանձնաժողովն իրականացրել է հեռահաղորդակցության ոլորտի ուսումնասիրություն՝ հիմնվելով Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, հեռահաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների կողմից հրապարակված հաշվետվությունների, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից նախկինում իրականացված հեռահաղորդակցության ոլորտի ուսումնասիրություններում առկա տվյալների վրա:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը, ի թիվս այլնի, արձանագրել է, որ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի ամրակցված կապի ծառայություններ հիմնականում մատուցվում են «Յուքոմ», «ՋիԷնՍի-Ալֆա» փակ և «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությունների կողմից, իսկ շարժական կապի ծառայությունները՝ «Յուքոմ», «Վիվա Արմենիա» փակ և «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությունների կողմից: 2024 թվականին նշված ընկերությունների ընդհանուր հասույթի մոտ 80 տոկոսը գոյացել է շարժական կապի ծառայությունների, իսկ մնացած մասը՝ ամրակցված կապի ծառայությունների մատուցումից:

Համակենտրոնացման գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ «Վիվա Արմենիա» ընկերությունը գործունեություն է ծավալում հեռահաղորդակցության ոլորտում, ընդ որում, գործունեությունը հիմնականում հանդիսանում է բջջային հեռախոսային ծառայությունների մատուցումը, իսկ «ՋիԷնՍի-Ալֆա» ընկերությունը մատուցում է ամրակցված էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ

(«ՋիԷնՍի-Ալֆա» ընկերությունն օգտագործում է «OVIO» ապրանքային նշանը):

Հանձնաժողովը, համալիր կերպով ուսումնասիրելով բոլոր առնչվող նյութերն ու փաստական հանգամանքները, թույլատրել է «Վիվա Արմենիա» ընկերության կողմից «ՋիԷնՍի-Ալֆա» ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոս փայաբաժնի ձեռքբերման գործարքը:

Ոլորտային ուսումնասիրությունների իրականացումը 2025 թվականին

Հանձնաժողովի առանձին լիազորություն է ոլորտային ուսումնասիրությունը: Հանձնաժողովն ամեն տարի դիտարկում է առանձին ոլորտներ և ապրանքային շուկաներ՝ պարզելու ոլորտի իրավական կարգավորման բացերը, հնարավոր մուտքի խոչընդոտները, ոլորտում մրցակցության մակարդակը, ինչպես նաև մշակելու բարձրացված խնդիրների լուծման ուղիներ:

Ոլորտային ուսումնասիրությունների շրջանակներում Հանձնաժողովի նպատակն է.

1. վերլուծել ոլորտում առկա իրավիճակը,
2. բացահայտել ոլորտում առկա մրցակցային իրավախախտումները,
3. ոլորտի քաղաքականությունը մշակող պետական մարմնին ներկայացնել ոլորտի զարգացման առաջարկներ:

2019	2020	2021	2022	2023	2024	2025
Բենզին և դիզելային վառելիք	Հանքարդյունա-բերություն	Թռչնամիս	Էլեկտրոնային առևտուր	Էլեկտրա-էներգետիկա	Բենզին, դիզելային վառելիք և ավիա-վառելիք	Կառուցապա-տողների և սպառողների միջև բազմա-բնակարան շենքերում անշարժ գույքի իրացման և սպասարկման գործընթացներ
Շաքարա-վազ	Ձու	Ախտորոշիչ ծառայու-թյուններ	Մանկական կեր	ՓՄՁ ֆինանսավո-րում	Էլեկտրական շարժիչով տրանսպոր-տային միջոցների լիցքավորում	Կորոնար անոթների ստենտներ
Կարագ	Ցորեն և ալյուր	Կաթ և կաթնա-մթերք	Բուսական յուղ	Էլեկտրո-նային հարթակնե-րով փոխադրում	Մրգային օղիներ	Ստենտավորման ծառայություններ
Սեղմված գազ	Դեղեր	Դեղեր	Բեռնա-փոխադրում	Ծխախոտ	Վերելակների շրջանառու-թյան և տեղադրման ու տեխնիկա-կան սպա-սարկման ծառայու-թյուններ	
Կոնյակ	Գովազդ	Առևտրային ցանցեր	Աջակցող միջոցներ	Պահնորդա-կան ծառայու-թյուններ	Ամրաններ	

Կառուցապատողների և սպառողների միջև բազմաբնակարան շենքերում անշարժ գույքի իրացման և սպասարկման գործընթացների ոլորտ

Հայաստանի Հանրապետությունում բազմաբնակարան շենքերում բնակարանների, հասարակական նշանակության տարածքների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման տարածքների կառուցապատման, իրացման և հետագա սպասարկման ոլորտը տնտեսության դինամիկ զարգացող ճյուղերից մեկն է:

Հանձնաժողովը 2025 թվականի դեկտեմբերի 29-ի **«Կառուցապատողների և սպառողների միջև բազմաբնակարան շենքերում անշարժ գույքի իրացման և սպասարկման գործընթացների ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները հաստատելու վերաբերյալ» թիվ 875-Ա որոշմամբ** հաստատել է բազմաբնակարան շենքերում բնակարանների, հասարակական նշանակության տարածքների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման տարածքների կառուցապատման, իրացման և հետագա սպասարկման ոլորտում (այսուհետ այստեղ նաև՝ Ոլորտ) իրականացրած ուսումնասիրության արդյունքները:

Ուսումնասիրության նպատակն է համապարփակ դիտարկել բազմաբնակարան շենքերի կառուցապատման ոլորտի ընդհանուր բնութագիրը, օրենսդրական կարգավորումներն ու բացերը, բացահայտել Ոլորտում սպառողների պաշտպանությանը վերաբերող խնդիրները և ներկայացնել համապատասխան առաջարկներ դրանց լուծման ուղղությամբ:

Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են հետևյալ հիմնական հարցերը՝

1. պայմանագրի կնքման առաջարկի (օֆերտա) փուլում կառուցապատող ընկերությունների կողմից գնորդներին ներկայացվող տեղեկատվության ծավալն ու բովանդակությունը.
2. կառուցապատող ընկերությունների օֆերտաներում ներկայացվող տեղեկատվության և գնման իրավունքի պայմանագրերի միջև համապատասխանությունը.
3. գնման իրավունքի պայմանագրերում ներառված անարդար պայմանների առկայությունը և դրանց ազդեցությունը սպառողների շահերի վրա.
4. բազմաբնակարան շենքերի հետագա շահագործման և սպասարկման կազմակերպման կարգը, ինչպես նաև շինարարական թերությունների համար պատասխանատվության բաշխումը.
5. անշարժ գույքի հանձնման ժամկետների ուշացումները և այդ առնչությամբ պատասխանատվությունը.
6. ոլորտին վերաբերող խնդիրների լուծման այլընտրանքային մեխանիզմների ուսումնասիրությունը և առաջարկությունների ներկայացումը:

Ուսումնասիրության արդյունքում դիտարկված խնդիրներն ամփոփվել են կառուցապատման գործընթացի երեք հիմնական փուլերի համատեքստում՝

1. պայմանագրի կնքման առաջարկի (օֆերտայի) փուլ,
2. գնման իրավունքի պայմանագրի կնքման փուլ,
3. շենքի շահագործման և սպասարկման փուլ:

Ոլորտին առնչվող դիտարկումներ և առաջարկներ.

1. Օֆերտայի փուլում ներդնել պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվության իրավական պահանջ, համաձայն որի օֆերտայում, ի թիվս այլնի, պետք է ներառվեն կառուցապատողի և առաջարկվող բնակարաններին վերաբերող հիմնական տվյալները (մակերես, մեկ քմ-ի արժեք, հարդարման աստիճան և այլն), ընդհանուր տարածքների և ենթակառուցվածքների նկարագրությունը, վճարման հիմնական պայմանները, շինարարության ավարտի նախատեսվող ժամկետները, ինչպես նաև շենքի հետագա սպասարկման և կառավարման հիմնական պայմանները,

2. Օրենսդրության շրջանակներում ամրագրել, որ բազմաբնակարան շենքերի կառուցապատման շրջանակում պայմանագրի կնքման առաջարկի (օֆերտայի) փուլում սպառողին ներկայացված տեղեկատվությունը համարվում է պայմանագրի անբաժանելի մաս և պարտադիր է կառուցապատողի համար՝ անկախ պայմանագրի տեքստում դրանց ամբողջական արտացոլումից,

3. սահմանել, որ օֆերտայի և պայմանագրի միջև անհամապատասխանության դեպքում գործում են օֆերտայում ներկայացված տվյալները ինչպես պայմանագրի գնի, այնպես էլ օֆերտայում ներկայացված այլ էական պայմանների մասով,

4. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով ամրագրել կառուցապատողի պարտադիր մասնակցությունը շենքի շահագործման սկզբնական փուլում՝ սահմանելով, որ շենքը շահագործման հանձնելու պահից առնվազն 3 տարի ժամկետով կառուցապատողը պարտավոր է իրականացնել շենքի սպասարկումը,

5. Օրենսդրությամբ սահմանել շենքի սպասարկման ծառայությունների բաժանումը՝ տարանջատելով պարտադիր սպասարկման ծառայություններ, որոնք ապահովում են շենքի ընդհանուր սեփականության բնականոն շահագործումը (վերելակների աշխատանք, աղբահանություն, ընդհանուր տարածքների մաքրություն և լուսավորություն, ինժեներական համակարգերի ընթացիկ սպասարկում), և լրացուցիչ սպասարկման ծառայություններ, որոնք ներառում են պարտադիր չհանդիսացող այլ ծառայություններ (լողավազան, խաղահրապարակ, անվտանգության և հարմարավետության լրացուցիչ ծառայություններ և այլն):

6. սահմանել, որ պարտադիր և լրացուցիչ սպասարկման ծառայությունների դիմաց վճարը պետք է լինի նախապես որոշված ու թափանցիկ: Ավելին՝ հաշվարկման կարգը և վճարի չափը պետք է սահմանվեն սկսած օֆերտայի փուլից, ապա նույն ձևով ամրագրվեն պայմանագրում:

7. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով ամրագրել կառուցապատողի պարտադիր մասնակ-

ցությունը շենքի շահագործման սկզբնական փուլում՝ սահմանելով, որ շենքը շահագործման հանձնելու պահից առնվազն 3 տարի ժամկետով կառուցապատողը պարտավոր է ապահովել շենքի ընդհանուր սեփականության հիմնական բաղադրիչների բնականոն շահագործումը: Մասնավորապես՝ կառուցապատողի պատասխանատվության տիրույթում պետք է ընդգրկվեն կառուցվածքային-կոնստրուկցիոն թերությունները, նյութերի որակական թերությունները, տեխնիկական-համակարգային թերությունները, հատուկ (սուբյեկտիվ) և ընդհանուր (օբյեկտիվ) պահանջներին չհամապատասխանող թերությունները, հավաքման (մոնտաժի) հետ կապված թերությունները և այլն:

8. Օրենսդրությամբ սահմանել շինարարական թերությունների հայտնաբերման, արձանագրման և վերացման միասնական և պարտադիր ընթացակարգ, որի շրջանակներում պետք է կարգավորվեն՝ թերությունների արձանագրման ձևը (ակտ, փորձաքննություն), դրանց վերացման առավելագույն ժամկետները, կառուցապատողի կողմից թերությունների վերացման ոչ պատշաճ կատարման դեպքում պատասխանատվության միջոցները, ինչպես նաև սեփականատերերի և կառավարման մարմինների կողմից պահանջ ներկայացնելու կարգը,

9. Օրենսդրությամբ նախատեսել կառուցապատողի պարտականությունների կատարումն ապահովող պարտադիր մեխանիզմներ, մասնավորապես՝ շինարարական թերությունների պատասխանատվության պարտադիր ապահովագրություն, կամ շենքի շահագործման հանձնումից առաջ կառուցապատողի կողմից որոշակի գումարի սառեցում սահմանված ժամկետով, կամ կառուցապատողի կողմից ներկայացվող բանկային երաշխիք կամ գրավ, որը կարող է օգտագործվել շինարարական թերությունների վերացման նպատակով,

10. Օրենսդրությամբ ամրագրել, որ բազմաբնակարան շենքերի կառուցապատման շրջանակում անշարժ գույքի հանձնման պայմանագրով սահմանված վերջնաժամկետի խախտման դեպքում կառուցապատողը պարտավոր է գնորդին վճարել պարտադիր տույժ յուրաքանչյուր ուշացած օրվա համար:

Կորոնար անոթների ստենտների շրջանառության ոլորտ

Հանձնաժողովը 2025 թվականի դեկտեմբերի 29-ի **«Կորոնար անոթների ստենտների շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները հաստատելու վերաբերյալ» թիվ 876-Ա որոշմամբ** հաստատել է կորոնար անոթների ստենտների շրջանառության ոլորտում (այսուհետ այստեղ նաև՝ **Ոլորտ**) իրականացված ուսումնասիրության արդյունքները:

Ուսումնասիրության իրականացման համար հիմք են հանդիսացել Առողջապահության նախարարության կողմից Հանձնաժողով ներկայացված Ոլորտի ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ առաջարկները:

Ուսումնասիրության նպատակն է դիտարկել կորոնար անոթների ստենտների շրջանառության ոլորտի ընդհանուր բնութագիրը, օրենսդրական կարգավորումները, զարգացման միտումները, Ոլորտում առկա մրցակցային իրավիճակը, վեր հանել տվյալ ոլորտի խնդիրները և ներկայացնել համապատասխան առաջարկներ դրանց լուծման ուղղությամբ:

«Կորոնար ստենտներ» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովն արձանագրում է.

Ապրանքային շուկայի ծավալների, կազմի և կառուցվածքի մասով՝

► Կորոնար ստենտների շուկայում 2022 թվականին գործունեություն է ծավալել թվով ավելի քան 15 տնտեսավարող սուբյեկտ, մինչդեռ 2024 թվականին վերջիններիս թիվը նվազել է՝ հասնելով 10-ի:

► 2023թ-ի ընթացքում կորոնար ստենտների իրացման և արտահանման ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 23 հազար հատ, ինչը մոտ 14%-ով ցածր է 2022թ-ի նույն ցուցանիշից:

► Հայաստանի Հանրապետությունում վաճառված ստենտների թիվն աճել է 9%-ով, իսկ կորոնար ստենտների ամբողջ շրջանառության բացասական դինամիկան պայմանավորված է վերաարտահանման կրճատման հանգամանքով:

► Կորոնար ստենտների շրջանառության նկատմամբ պարտադրողի ավտորիզացիոն նամակի պարտադիր պահանջի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններից հետո այն ներմուծողները, որոնք որևէ արտադրողի պաշտոնական ներկայացուցիչ չեն հանդիսանում, այլ ներմուծում են միջնորդավորված, հանդիպում են որոշակի խնդիրների, մասնավորապես, արտադրողի կողմից տրվող ավտորիզացիոն նամակի ստացման հետ կապված: Վերջիններս հիմնականում կամ շուկայից դուրս են մղվել կամ սկսել են բանակցություններ՝ անմիջապես արտադրողներից ներմուծում իրականացնելու նպատակով:

► Կենտրոնացվածության աստիճանը բնութագրող երկու ցուցանիշների համաձայն՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում «Կորոնար ստենտներ» ապրանքային շուկան ունեցել է կենտրոնացվածության միջին աստիճան, այնուամենայնիվ 2024 թվականին 2022 թվականի համեմատ կենտրոնացվածության մակարդակը բարձրացել է:

► 2023 թվականի իրացման ընդհանուր

ծավալում առաջին երեք խոշոր տնտեսավարող սուբյեկտներն են **«Ա» ՍՊ, «Բ» ՍՊ և «Դ» ՍՊ** ընկերությունները, որոնց մասնաբաժինները համապատասխանաբար կազմել են **22 տոկոս, 14 տոկոս և 14 տոկոս**:

► 2024 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում իրացման ընդհանուր ծավալում առաջին երեք խոշոր տնտեսավարող սուբյեկտներն են **«Ե» ՍՊ, «Բ» ՍՊ և «Զ» ՍՊ** ընկերությունները, որոնց մասնաբաժինները համապատասխանաբար կազմել են **24 տոկոս, 22 տոկոս և 16 տոկոս**: Նախորդ տարիներին առաջատար **«Ա» ՍՊ, «Գ» ՍՊ և «Դ» ՍՊ** ընկերությունների մասնաբաժինները նվազել են՝ կազմելով համապատասխանաբար **12 տոկոս, 13 տոկոս և 7 տոկոս**:

► Միջին եկամտաբերությունը, ըստ հասույթի, շուկայում ինչպես 2022թ-ին, այնպես էլ 2023-2024 թվականներին կազմել է շուրջ 20%:

► Ստենտավորման ծառայություններ մատուցող որոշ խոշոր բժշկական կազմակերպությունների կողմից կորոնար ստենտների ձեռքբերումը կատարվում է հիմնականում միևնույն մատակարարից, որը որոշ դեպքերում հանդիսանում է տվյալ բժշկական կազմակերպության հետ փոխկապակցվածություն ունեցող կազմակերպություն, կամ վերջինիս գործընկեր կազմակերպություն:

► **«2» բժշկական կազմակերպության** կորոնար ստենտների միակ մատակարարն է հանդիսանում «Թ» ՍՊ ընկերությունը:

► **«3» ԲԿ-ի** համար՝ «Ա» ՍՊ ընկերությունը (և ԲԿ-ի, և մատակարարի իրական շահառուները նույն անձինք են),

► **«4» ԲԿ-ի** համար՝ «Դ» ՍՊ ընկերությունը,

► **«1» ԲԿ-ի** դեպքում, եթե վերջինս 2022 թվականին ձեռքբերումներ իրականացնում էր մի շարք ընկերություններից հավասարապես, ապա 2023 թվականից ի վեր (ավտորիզացիոն նամակի պարտադիր առկայության պահանջի կիրարկումից հետո) վերջինիս միակ մատակարարն է հանդիսացել **«Ե» ՍՊ** ընկերությունը, որը շուկա է մուտք գործել հենց 2023 թվականից սկսած:

► **«Ե» ՍՊ** ընկերությունը շուկայում գործունեություն է սկսել ծավալել 2023 թվականից՝ գրավելով շուկայի 10 տոկոս, ապա 2024 թվականին ամրապնդել է իր դիրքը՝ զբաղեցնելով 24 տոկոս մասնաբաժին:

► Նշված **թվով չորս բժշկական կազմակերպությունների** կողմից 2024 թվականին մատուցվել է բնեղեն արտահայտությամբ ընդհանուր ստենտավորման ծառայությունների շուրջ **60 տոկոսը**:

► Բժշկական արտադրատեսակների՝ մասնավորապես կորոնար ստենտների շրջանառության ոլորտում կորոնար ստենտների վերջնական սպառողին իրացման շուկան որպես այդպիսին խիստ սահմանափակ է, այն ածանցյալ շուկա է ստենտավորման ծառայությունների մատուցման շուկային, որտեղ էլ ապահովվում է կորոնար ստենտի սպառումը վերջնական սպառողի (բուժառուի) կողմից:

► Հաշվի առնելով ծառայություններ մատուցող ԲԿ-ների և մատակարարների միջև առկա գործընկերային հարաբերությունները, որոշ դեպքերում նաև վերջիններիս փոխկապակցվածությունը՝ կարող ենք արձանագրել, որ ըստ էության կորոնար ստենտների մատակարարման ոլորտում մրցակցությունը սահմանափակ է,

ինչն առավել արտահայտված բնույթ է կրել 2023 թվականից ի վեր՝ ավտորիզացիոն նամակի պարտադիր պահանջի կիրառման արդյունքում գնումների գործընթացի (ավտոմատ կերպով նաև ոչ պետական գնման ընթացակարգերով մատակարարման) սահմանափակմամբ:

Ոլորտի իրավական կարգավորումների մասով

► Կորոնար ստենտների շուկան կարգավորվում է յուրաքանչյուր երկրի ազգային օրենսդրությամբ: Միաժամանակ, ԱՀԿ առաջարկությունների համաձայն՝ կարգավորող միջոցառումները պետք է լինեն ամենախիստը, քանի որ այս բժշկական արտադրատեսակը տեղադրվում է մարդու օրգանիզմում և պատկանում է բժշկական արտադրատեսակների D կատեգորիային՝ վտանգի բարձր ռիսկ:

► Հայաստանի Հանրապետությունում բժշկական մի շարք արտադրատեսակների, այդ թվում՝ կորոնար ստենտների շրջանառության համար պահանջվում է **ներմուծման (համապատասխանության) հավաստագիր**, որը տրվում է լիազոր մարմնի կողմից ներմուծման յուրաքանչյուր խմբաքանակի համար, և որի տրամադրման համար արտադրատեսակը ենթարկվում է համապատասխան փորձաքննության՝ ստուգելով նաև որակի համապատասխանության հավաստագրի առկայությունը և մի շարք այլ փաստաթղթեր:

► Պետական գնումների շրջանակներում տնտեսավարող սուբյեկտները կարող են մասնակցել մրցույթներին և համապատասխանաբար մատակարարումներ իրականացնել բժշկական հաստատություններին՝ պարտադիր կերպով ներկայացնելով **համապատասխանության հավաստագիր, ավտարիզացիոն նամակ** (երաշխիքային-լիազոր նամակ) և **ծագման սերտիֆիկատ**:

► Ներմուծման հավաստագիրը լիազոր մարմնի կողմից տրամադրվում է փորձագիտական եզրակացության հիման վրա, որի ընթացքում, ի թիվս այլնի, փաստաթղթային փորձաքննության են ներկայացվում նաև վերոնշյալ երեք փաստաթղթերը:

► **Ավտարիզացիոն նամակը** տրվում է պաշտոնական ներկայացուցչության կամ ուղիղ արտադրողից գնման պարագայում:

► Ավտարիզացիոն նամակի առկայությունը **պարտադիր պահանջ է պետական բյուջեի միջոցների հաշվին** մատուցվող բժշկական ծառայությունների համար օգտագործվող ներպատվաստվող (իմպլանտացվող) **բժշկական արտադրատեսակների դեպքում**, ինչը խնդրահարույց է, և կարող է հանգեցնել մրցակցային սահմանափակումների հետևյալ նկատառումներով.

► Քանի որ կարգավորումը ենթադրում է ավտորիզացիոն նամակի (երաշխիքային-լիազոր նամակի) տրամադրում բացառապես արտադրողի կողմից, ապա նման պայմաններում, **ըստ էության, բացառվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից զուգահեռ ներմուծված ստենտ իրացնող սուբյեկտների մասնակցությունը** պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների շրջանակում կազմակերպվող մրցույթներին,

► Զուգահեռ ներմուծում իրականացնող սուբյեկտները փաստացի զրկվում են պետական գնման գործընթացին

մասնակցելու հնարավորությունից՝ անկախ այն հանգամանքից, որ իրենց ապրանքը համապատասխանում է անվտանգության և որակի չափորոշիչներին,

► Արդյունքում սահմանափակվում է զուգահեռ ներմուծումը և զուգահեռ ներմուծում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հավասար մրցակցային հնարավորությունները:

► **Այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք ներմուծում իրականացնում են ոչ անմիջապես արտադրողից գնում իրականացնելով, դուրս են մղվում շուկայից:**

► Մյուս կողմից խնդրահարույց է ներդրված կարգավորումների կիրարկումը միայն պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում մատուցվող բժշկական ծառայությունների համար օգտագործվող բժշկական արտադրատեսակների նկատմամբ այն դեպքում, երբ այդ ծառայությունները պետական բյուջեի և ոչ պետական բյուջեի հաշվին մատուցվում են 50-ական տոկոս հարաբերակցությամբ:

► Համապատասխանության հավաստագիրը, ծագման սերտիֆիկատը, նաև ներմուծման հավաստագրի տրամադրումը լիազոր մարմնի կողմից արդեն իսկ ապրանքի որակի և համապատասխանության երաշխիք են: Հետևաբար ավտարիզացիոն նամակի առկայության պարտադիր պահանջը, այն էլ միայն պետգնումների շրջանակներում մատակարարման նկատմամբ, հանգեցնում է շուկայի մրցակցության սահմանափակմանը, ուստի առաջարկում ենք Հայաստանի Հանրապետությունում կորոնար ստենտների շրջանառության համար **ավտարիզացիոն նամակի առկայության պայմանի պարտադիր լինելը քննարկման առարկա դարձնել:**

Ստենտավորման ծառայությունների մատուցման ոլորտ

Հանձնաժողովը 2025 թվականի դեկտեմբերի 29-ի **«Ստենտավորման ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները հաստատելու մասին» թիվ 877-Ա որոշմամբ** հաստատել է ստենտավորման ծառայությունների մատուցման ոլորտում (այսուհետ այստեղ նաև՝ **Ոլորտ**) իրականացված ուսումնասիրության արդյունքները:

Հանձնաժողովը կատարել է հետևյալ եզրակացությունները և առաջարկությունները:

Ապրանքային շուկայի կազմի և կառուցվածքի վերաբերյալ

► «Կորոնար անոթների ստենտավորման ծառայություն» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ներառում է ստենտավորման ծառայությունները, իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը:

► Ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ստենտավորման ծառայություններ մատուցվել են թվով 14 բժշկական կազմակերպությունների կողմից, որոնցից երեքը՝ մարզերում՝ Վանաձոր, Գյումրի, Գորիս քաղաքներում:

► Մեկ, երկու և երեք դեղապատ ստենտի տեղադրմամբ ստենտավորման ծառայությունների ընդհանուր ծավալը 2024 թվականին կազմել է 10294 հատ, որից 5395-ը (52 տոկոս) իրականացվել է անվճար (պետության կողմից հատուցմամբ), իսկ 4899-ը (48 տոկոս)՝ վճարովի սկզբունքով:

► Մատուցված ստենտավորման ծառայությունների արժեքը կազմել է 9820421969 դրամ, որից 4350350997 դրամը (44 տոկոս) փոխհատուցվել է պետության կողմից, իսկ 5470070972 դրամը (56 տոկոս) վճարվել է բուժառուների կողմից: Պետպատվերի շրջանակներում ստենտավորման ծառայության գինն ավելի էժան է, որով և պայմանավորված է քանակական և արժեքային ցուցանիշների տոկոսային բաշխվածության շեղումը պետպատվերի և վճարովի տարբերակների միջև:

► Ստենտավորման ծառայությունների 49 տոկոսը մատուցվել է երեք՝ «3», «1», «2» բժշկական հաստատությունների կողմից, համապատասխանաբար՝ 18, 16 և 14 տոկոս մասնաբաժիններով (ըստ բնեղեն ցուցանիշի): Ստենտավորման ծառայություններ մատուցած հաջորդ խոշոր բժշկական կազմակերպությունը «4» ԲԿ-ն է՝ 11 տոկոս մասնաբաժնով:

► Մեկ դեղապատ ստենտի տեղադրմամբ առաջատար երեք կազմակերպությունները միասին մատուցել են ստենտավորման ծառայությունների 52 տոկոսը՝ «3» ԲԿ՝ 22 տոկոս, «2» ԲԿ՝ 15 տոկոս, «1» ԲԿ՝ 15 տոկոս:

► Երկու դեղապատ ստենտի տեղադրմամբ առաջատար երեք կազմակերպությունները միասին մատուցել են ստենտավորման ծառայությունների 45 տոկոսը՝ «1» ԲԿ՝ 20 տոկոս, «2» ԲԿ՝ 14 տոկոս, «3» ԲԿ՝ 11 տոկոս:

► Երեք դեղապատ ստենտի տեղադրմամբ առաջատար երեք կազմակերպությունները միասին մատուցել են ստենտավորման ծառայությունների 47 տոկոսը՝ «1» ԲԿ՝ 22 տոկոս, «4» ԲԿ՝ 14 տոկոս, «4» ԲԿ՝ 11 տոկոս:

► Ստենտավորման ծառայությունների ընդհանուր թվաքանակի (10294 հատ) 69 տոկոսը (7074 հատ) իրականացվել է մեկ ստենտի տեղադրմամբ, 22 տոկոսը՝ երկու ստենտի տեղադրմամբ (2286 հատ) և 9 տոկոսը՝ երեք ստենտի տեղադրմամբ (934 հատ):

► Բժշկական կազմակերպությունների ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ պետական պատվերի շրջանակներում կատարված ստենտավորման ծառայության միջին եկամտաբերությունը՝ ըստ հասույթի, մեկ, երկու և երեք դեղապատ ստենտի տեղադրմամբ 2024 թվականին կազմել է համապատասխանաբար 2, 6 և 10 տոկոս:

► Վճարովի ստենտավորման ծառայության միջին եկամտաբերությունը՝ ըստ հասույթի, մեկ, երկու և երեք դեղապատ ստենտի տեղադրմամբ 2024 թվականին կազմել է համապատասխանաբար 14, 20 և 24 տոկոս:

Ապրանքային շուկայում դիտարկված էական հանգամանքների վերաբերյալ

Ստենտավորման ծառայության ինքնարժեքի բացվածքի վերաբերյալ դիտարկումների հաշվառմամբ սույն ուսումնասիրության շրջանակներում բժշկական կազմակերպությունների ներկայացված **տվյալները նյութածախսի մասով, այդ թվում՝ նաև ստենտի արժեքի մասով, համադրելի են Համաձայնագրի կողմնորոշիչ գների հիման վրա հաշվարկված գների հետ (նյութածախսի մեծությունը և՛ ստենտի, և՛ այլ նյութածախսի մասով գտնվում է հաշվարկված նվազագույն և առավելագույն արժեքի միջակայքում):**

► ԲԿ-ների ներկայացրած տվյալների համաձայն՝ **ըստ տարբեր ԲԿ-ների ստենտավորման ծառայությունների համար հաշվարկված պետպատվերի արժեքում պարտադիր հետազոտությունների բաղադրիչը ներառված է տարբեր չափով և բովանդակությամբ** այն դեպքում, երբ սահմանված է **լաբորատոր-գործիքային ախտորոշիչ նվազագույն հետազոտությունների ցանկ,** որից շեղումները ըստ անհրաժեշտության կամ ըստ առանձին դեպքերի կարող են վճարվել որպես առանձին կատարվող, ստենտավորման ինքնարժեքում չներառված հետազոտություն: **Միաժամանակ, քանի որ լիազոր մարմնի կողմից սահմանված է պարտադիր նվազագույն հետազոտությունների բովանդակություն, այն չպետք է տարբերվի** ըստ ԲԿ-ների:

► Պետպատվերի գնի կառուցվածքում **պարտադիր հետազոտությունների մասով որպես ծախս ներառված լինելու պարագայում այն նույնական պետք է լինի նաև վճարովի եղանակով իրականացված միջամտության համար (անհրաժեշտության դեպքում լրացուցիչ հետազոտությունների համար** առանձին վճարման տրամաբանությամբ):

► Վերանայման անհրաժեշտություն կա անմիջապես կորոնարոգրաֆիայի պրոցեսի ընթացքում ստենտավորման միջամտության իրականացման գների հաշվարկման մեթոդաբանությունում, որի արդյունքում կբացառվի սպառողի կողմից միևնույն ծառայության դիմաց կրկնակի վճարման հանգամանքը:

Ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ

Սույն ուսումնասիրության շրջանակներում դիտարկված իրավական կարգավորումները բազմաթիվ են և պարունակում են նեղ մասնագիտական մոտեցումներ: Նշված հանգամանքի հաշվառմամբ առաջարկում ենք բժշկական կազմակերպություններում ապահովել ծառայությունների մատուցման գների, դրանց բովանդակության, պետպատվերով հատուցման հնարավորության և սպառողի (բուժառուի) համար էական համարվող այլ տեղեկությունների վերաբերյալ մատչելի, ամբողջական և համապարփակ տեղեկատվության ներկայացվածություն և հասանելիություն՝ տվյալ բժշկական կազմակերպությունում՝ առանց լրացուցիչ տեղեկատվական աղբյուրների ներգրավման:

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«2025 թվականը Հայաստանի համար նշանավորվեց սպառողների շահերի պաշտպանության նոր փուլի մեկնարկով:

Հանձնաժողովը, դառնալով սպառողների շահերի պաշտպանությունն իրականացնող կենտրոնական մարմին, ստանձնել է յուրաքանչյուր սպառողի կողքին գտնվելու և նրա շահերի պաշտպանը լինելու չափազանց կարևոր և պատասխանատու առաքելություն»:

Տիգրան Մարկոսյան

Օրենսդրական փոփոխությունները ձևավորել են սպառողների շահերի պաշտպանության նոր միջավայր

Հաշվետու տարում սպառողների իրավունքների պաշտպանության և տնտեսական մրցակցության ոլորտում իրականացվել են համակարգային և խորքային օրենսդրական փոփոխություններ, որոնք նշանակալիորեն վերափոխել են կարգավորող միջավայրը և ամրապնդել Հանձնաժողովի դերը՝ որպես սպառողների շահերի պաշտպանության կենտրոնական և կոնտակտային հիմնական մարմին:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում Հանձնաժողովին վերապահվել են ընդլայնված լիազորություններ սպառողների դեմ ուղղված իրավախախտումների բացահայտման, կանխարգելման և արդյունավետ արձագանքման ուղղությամբ: Օրենսդրորեն ամրագրվել են սպառողների դեմ անարդար առևտրային գործելակերպի՝ ներառյալ դրա դրսևորումների հստակ սահմանումներ: Սահմանվել են սպառողների շահերի

Ի գիտություն

Սպառողների շահերը խախտող գործելակերպ են համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած վարքագիծ, գործողություն կամ անգործություն, որոնք **ազդում են կամ կարող են ազդել** անորոշ շրջանակով սպառողների կամ սպառողների խմբի շահերի վրա:

Սպառողների շահերը խախտող գործելակերպի հանդիպելիս **անհրաժեշտ է դիմել «Սպառողի օգնականին»**

դեմ ուղղված վարույթների հարուցման և քննության առանձնահատկությունները, ինչը հնարավորություն է տալիս առավել արագ և հասցեական արձագանքել սպառողների իրավունքների խախտումներին: Միաժամանակ սահմանվել է պատասխանատվություն սպառողների դեմ ուղղված իրավախախտումների համար՝ ապահովելով համաչափ և զսպող իրավական հետևանքներ:

Օրենսդրական կարգավորումներով նախատեսվել են նաև գների ներկայացման նոր կանոններ: Տնտեսավարող սուբյեկտները, բացի վաճառքի գնից, պարտավոր են ներկայացնել նաև ապրանքի միավոր գինը: Նման կարգավորման առկայությունը թույլ կտա սպառողին առանց հավելյալ ջանքերի համեմատել նույն ապրանքի տարբեր ծավալի, քաշի կամ մակերեսի փաթեթավորմամբ տարբերակները և հասկանալ իր կողմից ավելի մեծ ծավալով ապրանք ձեռք բերելու դեպքում իրական խնայողությունը:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում կատարված փոփոխություններով սպառողների պաշտպանության համակարգը համալրվել է հիմնարար նշանակություն ունեցող նոր սկզբունքներով և հասկացություններով:

Օրենսդրորեն ամրագրվել է սպառողի ազատ ընտրության իրավունքը՝ որպես սպառողների իրավունքների պաշտպանության առանցքային բաղադրիչ: Սահմանվել են այնպիսի կարևոր հասկացություններ, ինչպիսիք են «միջին սպառող», «առևտրային հաղորդակցություն», «սպառողի տնտեսական վարքագծի վրա ազդեցություն», «ձեռքբերման վերաբերյալ որոշում» և այլն, որոնք հստակեցնում են իրավակիրառ պրակտիկան և բարձրացնում իրավական որոշումների կանխատեսելիությունը: Օրենքով նախատեսվել են նաև սպառողների դեմ տնտեսավարող սուբյեկտների անարդար առևտրային գործելակերպի ամբողջական կարգավորումներ: Սահմանվել է անարդար գործելակերպ դրսևորելու արգելքի սկզբունքը, սահմանագծվել են այդպիսի վարքագծի հատկանիշները, ինչպես նաև հստակ ամրագրվել են այն գործողություններն ու անգործությունները, որոնք բոլոր դեպքերում համարվում են անարդար: Այս մոտեցումը ձևավորում է ավելի թափանցիկ և պատասխանատու գործարար միջավայր՝ միաժամանակ բարձրացնելով սպառողների վստահությունը շուկայի նկատմամբ:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում կատարված փոփոխությունները ևս միտված են շուկայի թափանցիկության և տեղեկացված սպառման ապահովմանը: Տնտեսավարող սուբյեկտների համար սահմանվել է վաճառվող ապրանքի մեկ միավորի գնի պարտադիր ցուցադրման պահանջ: Այս դրույթը սպառողին հնարավորություն է տալիս կատարել իրազեկ և համեմատելի ընտրություն՝ հիմնված իրական գնային տեղեկատվության վրա:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) դրույթների շրջանակում շարունակվում է օրենսդրության մոտարկման գործընթացը՝ սպառողների պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու և համակարգերի միջև համադրելիություն ձևավորելու նպատակով:

Այսպիսով, հաշվետու տարում իրականացված օրենսդրական փոփոխությունները ոչ միայն ընդլայնել են Հանձնաժողովի գործիքակազմը, այլև ձևավորել են սպառողների շահերի պաշտպանության առավել հստակ, կանխատեսելի և արդյունավետ համակարգ: Դրանք հիմք են ստեղծում արդար մրցակցության, պատասխանատու գործարար վարքագծի և սպառողների վստահության ամրապնդման համար՝ ապահովելով շուկայի կայուն և հավասարակշռված զարգացում:

Գործարար դաշտը սույն օրենսդրական փոփոխությունների արդյունքում նույնպես ստանում է հստակ և կանխատեսելի կանոններ. մրցակցությունը դառնում է ավելի արդար, շուկան՝ ավելի վստահելի, իսկ պատասխանատու տնտեսավարող սուբյեկտը՝ առավել պաշտպանված անբարեխիղճ մրցակցությունից:

Սպառողների պաշտպանության թվային վերափոխումը՝ կարևոր ինստիտուցիոնալ հանգրվան

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը արձանագրել է մի շարք էական ձեռքբերումներ, որոնց թվում՝ «Սպառողի օգնական» թվային հարթակի գործարկումը, որը հանդիսանում է ինստիտուցիոնալ զարգացման և սպառողների պաշտպանության համակարգի արդիականացման կարևորագույն հիմնասյուներից մեկը:

Հարթակի ներդրումը պարզապես տեխնոլոգիական նորամուծություն չէ, այն նշանավորել է սպառողների պաշտպանության համակարգի համապարփակ թվային վերափոխման մեկնարկը և վճռական քայլ է ժամանակակից, նախաձեռնողական և տվյալահեն կարգավորման համակարգի ձևավորման ուղղությամբ:

Մինչ այս կիրառվող մեխանիզմները թեև ապահովում էին օրենսդրական պահանջների պահպանումը, հաճախ ժամանակատար էին և զգալի վարչական ռեսուրսներ էին պահանջում: Արագ փոփոխվող շուկաների, թվայնացման խորացման և բիզնես մոդելների զարգացող բազմազանության պայմաններում Հանձնաժողովն արձանագրել է առավել ճկուն և արձագանքող մոտեցման անհրաժեշտությունը:

«Սպառողի օգնական» հարթակի գործարկմամբ հիմնավորապես փոխվել է անհատական սպառողական վեճերի քննարկման գործընթացը: Օգտագործման տեսանկյունից հեշտ ընկալելի և հասանելի այս թվային գործիքը հնարավորություն է տալիս սպառողներին մի քանի պարզ քայլերի միջոցով ներկայացնել բողոքներ՝ անմիջապես Հանձնաժողովի պաշտոնական կայքի միջոցով: Բողոքը հարթակի միջոցով փոխանցվում է համապատասխան տնտեսավարող սուբյեկտին, որը պարտավոր է 14 օրվա ընթացքում արձագանքել՝ խնդիրը լուծելով կամ ներկայացնելով հիմնավորված պարզաբանում: Պատասխանն ուղարկվում

է ինչպես սպառողին, այնպես էլ՝ Հանձնաժողովին:

Սպառողը հնարավորություն ունի առցանց բողոքարկել տնտեսավարող սուբյեկտի պատասխանը, եթե բողոքը չի լուծվում կամ ստացված պատասխանը հիմնավոր չէ և իրեն չի գոհացնում. այս դեպքում բողոքը փոխանցվում է Հանձնաժողովի հետ համագործակցող սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին և իրավաբանական ընկերություններին: Հանրային շահի առկայության պարագայում գործը կարող է ենթարկվել Հանձնաժողովի լրացուցիչ ուսումնասիրության և դառնալ իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման հիմք:

Այս մոտեցումը միաժամանակ հետապնդում է մի շարք ռազմավարական նպատակներ՝

- ապահովում է սպառողների իրավունքների իրացման մատչելի և թափանցիկ մեխանիզմ:
- խրախուսում է տնտեսավարող սուբյեկտներին վեճերը լուծել կամավոր և սահմանված ժամկետներում:
- նվազեցնում է վարչարարության բեռը՝ առանց լրացուցիչ ռեսուրսների ավելացման,
- ապահովում է ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների լիարժեք ներգրավվածությունը սպառողների շահերի պաշտպանության գործընթացին,
- հնարավորություն է տալիս կենտրոնացնել Հանձնաժողովի վերահսկողական և վարույթային կարողությունները համակարգային և բարձր ռիսկային խախտումների վրա:

Միաժամանակ, առավել հաճախ ստացվող բողոքների կատեգորիաների՝ ներառյալ ապրանքների և դրանց անհամապատասխանության, առաքման ծառայությունների, երաշխիքային ժամկետների խախտումների, թվային ծառայությունների, գովազդի և պայմանագրային վեճերի համար մշակված էլեկտրոնային ձևաթղթերի նմուշներն էապես բարելավում և հեշտացնում են մուտքագրվող տվյալների որակը և համակարգվածությունը:

«Սպառողի օգնական» հարթակի ռազմավարական նշանակությունը հատկապես արտահայտվում է դրա վերլուծական ներուժում: Այն ձևավորում է տվյալահեն սպառողների պաշտպանության համակարգի հիմքը, որտեղ բողոքները դիտարկվում են ոչ միայն որպես անհատական պահանջներ, այլ նաև որպես շուկայի վարքագծի ցուցիչներ: Այս մոտեցումը Հանձնաժողովին հնարավորություն է տալիս ոչ միայն առավել արդյունավետ մշակել անհատական դեպքերը, այլև վերլուծել բողոքների միտումները և բացահայտել հնարավոր կրկնվող իրավախախտումների օրինաչափությունները:

Առաջիկայում նախատեսվում է հարթակի գործառույթների հետագա զարգացում՝ տվյալների առաջադեմ վերլուծության գործիքների և արհեստական բանականության մեխանիզմների ինտեգրմամբ: Այս լուծումները հնարավորություն կտան իրականացնել բողոքների օրինաչափությունների շարունակական մշակում, վաղ փուլում հայտնաբերել համակարգային խնդիրները և ապահովել առավել նախաձեռնողական կարգավորիչ միջամտություն:

«Սպառողի օգնական» հարթակի գոր-

ծարկմամբ Հանձնաժողովը կատարել է վճռական քայլ դեպի թվային վերափոխում, ինստիտուցիոնալ արդյունավետություն և խելամիտ իրավակիրառում: Բարեփոխումը իրականացվել է առանց վարչական բեռի ավելացման՝ միաժամանակ բարձրացնելով համակարգի մատչելիությունը, թափանցիկությունն ու արձագանքման արագությունը:

Հանձնաժողովը տվյալ նախաձեռնությունը գնահատում է որպես հաշվետու տարվա կարևորագույն ձեռքբերումներից մեկը և սպառողների պաշտպանության շարունակական արդիականացման ու արդար շուկայական հարաբերությունների ամրապնդման հիմնասյուն:

«Սպառողի օգնական» հարթակի վերաբերյալ ուղեցույցը հասանելի է այս հղմամբ:

2025 թվականին ներդրված «Սպառողի օգնական» թվային հարթակը գործնականում ապացուցել է իր արդյունավետությունը: Հարթակի միջոցով ներկայացված դիմումների զգալի մասը կարգավորվել է՝ առանց Հանձնաժողովի միջամտության: Այս արդյունքը ցույց է տալիս, որ հարթակը նպաստում է սպառողների և տնտեսավարող սուբյեկտների միջև արագ և արդյունավետ հաղորդակցությանը: Միևնույն ժամանակ, տնտեսավարող սուբյեկտները ավելի հաճախ են ինքնուրույն արձագանքում առաջացած խնդիրներին՝ դրսևորելով պատասխանատու վարքագիծ:

Արդյունքում, հարթակը ոչ միայն հեշտացնում է սպառողների խնդիրների լուծումը, այլև նպաստում է մրցակցային միջավայրի բարելավմանը և Հանձնաժողովի գործառույթների առավել արդյունավետ իրականացմանը:

Սպառողների շահերի պաշտպանության համար Հանձնաժողովի կողմից իրականացված գործնական քայլեր հեռահաղորդակցության ոլորտում

Հանձնաժողովը վարույթներ է հարուցել հեռահաղորդակցության ոլորտի որոշ ընկերությունների կողմից սպառողների (բաժանորդների) հետ կնքվող որոշակի ժամկետով (6 ամիս, 1 տարի և այլն) միանալու պայմանագրերում այդ ժամկետի ինքնաբերաբար երկարաձգման պայման սահմանված լինելու առնչությամբ:

Վարույթների շրջանակներում, ի թիվս այլնի, արձանագրվել է, որ թեպետ առկա է բաժանորդային պայմանագրերն առանց կնքելու հնարավորություն, սակայն այդ պայմանագրերի լուծումը կատարվում է միայն ընկերությունների վաճառքի և սպասարկման կենտրոններ այցելելու միջոցով՝ սպառողների համար լրացուցիչ դժվարություններ ստեղծելով:

Ընկերությունների կողմից Հանձնաժողովին ներկայացրած տեղեկատվությունից պարզ է դարձել, որ վերջիններս բաժանորդների հետ որոշակի ժամկետով պայմանագրեր չեն կնքում և հետևաբար ժամկետի

երկարաձգման (այդ թվում՝ ինքնաբերաբար) մասով հարցը կիրառելի չէ, իսկ առանձին դեպքերում (հատուկ առաջարկներ) կնքվում են որոշակի ժամկետով ծառայությունների և/կամ որոշակի սակագնային փաթեթով բաժանորդ մնալու պարտավորությամբ պայմանագրեր, որոնք ևս կնքվում են անորոշ ժամկետով:

Վարույթի արդյունքում Հանձնաժողովը հաստատել է կարևոր սկզբունքներ, որոնք նախադեպային են ընկերությունների համար՝

► Սպառողը պետք է հնարավորություն ունենա պայմանագիր կնքելու պահին ընտրելու՝ ցանկանում է, որ այն ինքնաբերաբար երկարաձգվի, թե ոչ: Օրինակ՝ եթե սպառողը կնքում է 12 ամսով ինտերնետ ծառայության մատուցման պայմանագիր, որում նախատեսված է ինքնաբերաբար երկարաձգման հնարավորություն, ապա նա նաև պետք է հնարավորություն ունենա հրաժարվելու դրանից հենց պայմանագրի կնքման պահին:

► Եթե պայմանագրով նախատեսված է ինքնաբերաբար երկարաձգում, ապա սպառողը պետք է ողջամիտ ժամկետում առարկություն ներկայացնելու հնարավորություն ունենա, ընդ որում պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած պահի կարող է հայտնել, որ չի ցանկանում երկարաձգել պայմանագիրը:

► Սպառողը պետք է նախապես իրազեկված լինի, թե երբ է ավարտվում պայմանագիրը, ինչ ժամանակահատվածում կարող է առարկել պայմանագրի ինքնաբերաբար երկարաձգման դեմ, և եթե չառարկի, պայմանագիրը ինչ ժամկետով է երկարաձգվելու:

► Պայմանագրի երկարաձգումից հրաժարումը չպետք է սպառողից պահանջի ավելի շատ ջանքեր, քան պայմանագրի կնքումը: Օրինակ՝ եթե նախատեսված է պայմանագրի կնքում առցանց եղանակով, ապա սպառողից չի կարող պահանջվել, որպեսզի նա երկարաձգումից հրաժարվելու համար պարտադիր ներկայանա ընկերության գրասենյակ:

Հարկ է նշել նաև, որ ընկերությունները ընդունել են իրենց վերագրվող իրավախախտման փաստը և անմիջապես սկսել են միջոցառումներ՝ սպառողների իրավունքները վերականգնելու ուղղությամբ, իսկ Հանձնաժողովը տվել է նախազգուշացում՝ ուղղորդելով բոլոր տնտեսավարող սուբյեկտներին ապահովել թափանցիկ, արդար և սպառողի համար հարմար պայմաններ:

Այս վարույթներիի արդյունքներով Հանձնաժողովը ոչ միայն կարգավորել է առանձին ընկերությունների վարքագիծը, այլ նաև փոփոխություն է բերել ամբողջ հեռահաղորդակցության շուկայի մշակույթում՝ բարձրացնելով սպառողի շահերի պաշտպանվածությունը և շուկայական թափանցիկությունը: Այսպիսով՝ սպառողը պաշտպանված է միանալու պայմանագրերում տնտեսավարող սուբյեկտի կողմից միակողմանիորեն ժամկետի ինքնաբերաբար երկարաձգման չհիմնավորված պայմանների կիրառման գործելակերպից:

Վիճակախաղերի և ինտերնետ շահումով խաղերի ոլորտում սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններ

Հանձնաժողովը «ԿԱԲԱՐԿՈ», «ԴԻՋԻ-ԹԵՅՆ», «ԳՈՒԴ ՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ և «ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ միասին նաև՝ **Ընկերություններ**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել է վարույթներ:

Այդ վարույթները հարուցվել են օգտատեր չհանդիսացող անձանց և օգտատերերին մարքեթինգային հաղորդագրություններ ուղարկելու ընկերությունների վարքագծում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Վարույթների շրջանակներում, ի թիվս այլ գործողությունների, Հանձնաժողովն իր պաշտոնական կայքէջում և տեղեկատվության տարածման այլ միջոցներով հորդորել է ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի վերաբերյալ գովազդային բնույթի հաղորդագրություններ (sms, viber, whatsapp, էլ. փոստ և այլն) ստացած քաղաքացիներին դիմել Հանձնաժողով: Քաղաքացիների կողմից ներկայացված հաղորդագրություններից պարզ է դարձել, որ Ընկերությունների կողմից ուղարկվում են «խաղի» առաջարկ պարունակող տարաբնույթ բովանդակություններով հաղորդագրություններ:

Վարույթի արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ ընկերությունները քաղաքացիներին ուղարկել են շուրջ 63,5 միլիոն գովազդային բնույթ ունեցող մարքեթինգային հաղորդագրություններ՝ առանց այդ մասին նրանց առանձին արտահայտած կամահայտնության և նման կամահայտնության ժամկետային սահմանափակման, առանց տարիքային սահմանափակումների և կորուստների մասին անհրաժեշտ նախազգուշացնող տեղեկությունների:

Հանձնաժողովը «ԿԱԲԱՐԿՈ», «ԴԻՋԻ-ԹԵՅՆ», «ԳՈՒԴ ՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ և «ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտատեր չհանդիսացող անձանց և օգտատերերին վիճակախաղերի և ինտերնետ շահումով խաղերի վերաբերյալ անհրաժեշտ նախազգուշացնող տեղեկություններ չպարունակող գովազդային բնույթի մարքեթինգային հաղորդագրություններ ուղարկելը որակել է որպես մրցակցություն, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ այստեղ՝ **Օրենքի խախտում**) և նշանակել ընդհանուր մոտ 1 միլիարդ դրամ տուգանք:

Բացի տուգանքի նշանակումից՝ Հանձնաժողովը Օրենքի խախտման համար

Ընկերություններին հանձնարարել է.

► անհապաղ շտկել Օրենքի խախտումը՝ մշակել օգտատերերին վիճակախաղերի և ինտերնետ շահումով խաղերի վերաբերյալ մարքեթինգային բնույթ ունեցող հաղորդագրություններ ուղարկելու առնչությամբ կանոններ և այն ներկայացնել Հանձնաժողովի կարծիքին,

► մինչև վերոնշյալ հանձնարարության կատարումն օգտատերերին վիճակախաղերի և ինտերնետ շահումով խաղերի վերաբերյալ մարքեթինգային բնույթ ունեցող հաղորդագրությունների ուղարկումն իրականացնել Հանձնաժողովի կողմից սույն որոշումներով ձևակերպված դիրքորոշումների հաշվառմամբ:

Ընկերությունները ընդունել են իրենց վերագրվող իրավախախտումը կատարած լինելու փաստը և հայտնել պատրաստակամություն շտկել պրակտիկան, մշակել հաղորդագրությունների ուղարկման կանոններ և դրանք ներկայացնել Հանձնաժողովի կարծիքին՝ հաղորդագրությունների ուղարկման գործընթացը համապատասխանեցնելով Հանձնաժողովի արտահայտած հստակ դիրքորոշումներին:

• **Հանձնաժողովը նաև եզրակացություն է ընդունել՝ շահումով խաղերի ոլորտում անձնական տվյալների օգտագործման առնչությամբ**

Նախորդ վարույթի արդյունքում Հանձնաժողովը հստակ ազդանշան հղեց վիճակախաղերի և ինտերնետ շահումով խաղերի ոլորտում սպառողների շահերի պաշտպանության առաջնահերթության մասին՝ մարքեթինգային հաղորդագրությունների և անձնական տվյալների օգտագործման նկատմամբ մոլորեցնող պրակտիկայի անվճռականության վերացման համար:

Այս ուղղությամբ կարգավորումներ սահմանելու նպատակով Հանձնաժողովի հետ համագործակցությամբ վիճակախաղեր և ինտերնետ շահումով խաղեր իրականացնող ընկերությունները մշակեցին մարքեթինգային բնույթի հաղորդագրությունների ուղարկման և դրանց վերաբերյալ տրված համաձայնությունների վերահաստատման կանոններ (այսուհետ՝ **Կանոններ**), որոնք Հանձնաժողովը գնահատեց որպես լիովին համապատասխան տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությանը[1]:

Կանոնների հիմնական դրույթներն ապահովում են, որ

► Որևէ պարագայում որևէ եղանակով (էլ.փոստ, SMS հաղորդագրություն, Viber, WhatsApp և այլն) մարքեթինգային հաղորդագրություններ չեն կարող ուղարկվել այն օգտատիրոջը, ով չի տվել իր համաձայնությունը:

► Համաձայնությունը տրվում է կայքում գրանցման փուլում: Ընդ որում՝

1 Մանրամասներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումներով՝
https://ef.competition.am/api/decision/ED65414A-C458-469F-B3E1-87456EF81182/download
https://ef.competition.am/api/decision/91DEA701-7F29-4888-BA76-38E106EBEEC9/download
https://ef.competition.am/api/decision/3167C825-ECB8-445A-B12A-C318BA580226/download
https://ef.competition.am/api/decision/2B28CE53-5A86-4C57-8895-177DF73B197D/download

գրանցումն իրականացնելու համար հաղորդագրությունների ստացմանը համաձայնություն տալը պարտադիր չէ. օգտատերը կարող է նաև հրաժարվել դրանցից:

► Եթե այնուամենայնիվ օգտատերն արդեն գրանցվել է, տվել իր համաձայնությունը, բայց հետագայում փոխել է միտքը՝ ցանկացած պահի հնարավորություն ունի հրաժարվել հաղորդագրությունների ստացումից՝

- կայքի անհատական էջի կարգավորումները փոփոխելով
- էլեկտրոնային հաղորդակցման հավելվածների (Viber, WhatsApp և այլն) կարգավորումներից արգելափակելով դրանց ստացումը (opt-out)
- Ընկերություններին հեռախոսազանգով, ներքին հաղորդագրությամբ կամ այլ միջոցներով դիմելով, որի պարագայում գործընթացը 3 աշխատանքային օրից ավել չի կարող տևել:

► Եթե օգտատերն անժամկետ և ամբողջական արգելափակել է հաշիվը, նրան հաղորդագրություններ չեն կարող ուղարկվել՝ անկախ այն հանգամանքից, գրանցման ընթացքում համաձայնություն տվել է, թե ոչ:

► Եթե օգտատերը ժամանակավորապես է արգելափակել հաշիվը, այդ ժամկետում հաղորդագրություններ չի կարող ստանալ: Ժամկետն ավարտվելուց հետո կայք մուտք գործելուց կբացվի հաղորդագրությունների ստացմանը համաձայնություն տալու նոր պատուհան, ինչպես գրանցման փուլում:

► Հաղորդագրությունները պետք է պարունակեն «21+» նշագրում և նախազգուշացում՝ «Խաղին մասնակցելով կարող եք կրել նյութական վնասներ: Ոչ սթափ կամ հոգեճնշող վիճակում խաղալն անթույլատրելի է»:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ինտերնետ շահումով խաղեր և վիճակախաղեր իրականացնող ընկերությունները սահմանել են նաև «Պասիվ օգտատեր» հասկացությունը, որը, ընդհանուր գծերով վերաբերում է այն անձին, ով մեկ չընդհատվող օրացույցային տարվա ընթացքում Ընկերության կայքում չի դրսևորել որևէ ակտիվություն՝ չի կատարել որևէ խաղադրույք/մասնակցության վճար, ներառյալ բոնուսների միջոցով կատարված խաղադրույքները/մասնակցության վճարները: «Պասիվ» օգտատերերը մարքեթինգային բնույթի հաղորդագրություններ չեն ստանում կապի որևէ եղանակով:

Այս Կանոնները ոչ միայն պաշտպանում են սպառողի իրավունքները, այլև նվազեցնում վիճակախաղերի և ինտերնետ շահումով խաղերի ոլորտում անբարեխիղճ մրցակցության հնարավորությունը, բարձրացնում շուկայի թափանցիկությունն ու վստահելիությունը և ստեղծում այնպիսի միջավայր, որտեղ ընկերությունները գործում են պատասխանատվությամբ, իսկ սպառողը՝ լիարժեք պաշտպանված: Այսպիսով՝ սպառողն արդեն հստակ կտեղեկանա իր կամարտահայտության դրսևորումների մասին՝ կայացնելով իր կողմից հիմնավորված և խելամիտ քայլեր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Անուշ Բեղլոյան

«2025 թվականին Հայաստանի Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովն անցավ վերափոխումների փուլ՝ հաստատվելով որպես սպառողների իրավունքների պաշտպանության հարցերով երկրի կենտրոնական մարմին՝ շնորհիվ անկյունաքարային օրենսդրական բարեփոխումների և «Սպառողի օգնական» թվային հարթակի գործարկման:

Մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը՝ խթանելու արդար մրցակցային շուկա, մի միջավայր, որը հզորացնում է ինչպես տնտեսավարող սուբյեկտներին, այնպես էլ շարքային քաղաքացիներին:

Հավատացած ենք, որ ազնիվ մրցակցությունը տնտեսության զարկերակն է, իսկ սպառողի իրավունքների պաշտպանությունը՝ մեր հասարակության ապահովության վահանը»:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

«Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանց» (ICPEN)

Հանձնաժողովը, ակտիվ մասնակցություն ցուցաբերելով «Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանցի» (International Consumer Protection and Enforcement Network/ICPEN) աշխատանքներին, 2025 թվականին դարձել է կազմակերպության լիիրավ անդամ:

Մինչ այդ Հանձնաժողովը ICPEN-ի գործընկերոջ կարգավիճակ էր ստացել 2023 թվականի նոյեմբերին՝ հնարավորություն ստանալով երկու տարի անց լիարժեք անդամակցել կազմակերպությանը:

«Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանցի» համատեքստում կարևոր զարգացման ուղղություններից է Իտալիայի մրցակցային մարմնի հետ մեկնարկած Սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող մարմնի արդյունավետության բարձրացման մենթորական ծրագիրը, որի շրջանակներում Իտալիայի մրցակցային

ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը համագործակցում է հետևյալ միջազգային կառույցների հետ

Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) առևտրի և զարգացման հարցերով համաժողով (UNCTAD)

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Բուդապեշտում մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոն (OECD-RCC)

Մրցակցության միջազգային ցանց (ICN)

Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանց (ICPEN)

ԵՄ Էներգետիկ համայնքի անդամ պետությունների մրցակցային մարմինների միջև մրցակցության ցանց

Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհուրդ (այդ թվում՝ գովազդի կոորդինացիոն խորհուրդ)

Եվրասիական տնտեսական հանձնաժողով (ԵՏՀ) (Հակամենաշնորհային կարգավորման դեպարտամենտ, Մրցակցային քաղաքականության և պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում քաղաքականության դեպարտամենտ

մարմինը, որն ունի թե՛ մրցակցության, թե՛ սպառողների շահերի պաշտպանության լիազորություններ, ներկայացրել է իր փորձը՝ սպառողների բողոքների ընդունման, մշակման և գնահատման, սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող մարմինների առաջնահերթությունների սահմանման, արդյունավետության գնահատման, սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ վարույթներում հատուկ գործիքակազմերի օգտագործման վերաբերյալ: Քննարկվել են նաև սպառողների շահերի պաշտպանության իրավական դաշտի, սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող պետական մարմնի լիազորությունների շրջանակի և սպառողական վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների վերաբերյալ հարցեր: Ծրագիրն ավելի պրակտիկ և արդյունավետ դարձնելու համար կազմակերպվել է երկու ուսումնական այց Հռոմ և Երևան:

Հանձնաժողովը մասնակցել է սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 5-ը Դոմինիկյան Հանրապետության Սանտո Դոմինգո քաղաքում կայացած ICPEN-ի տարեկան համաժողովին, որոնց շրջանակներում ներկայացրել է Իտալիայի մրցակցային մարմնի հետ համատեղ իրականացված մենթորության ծրագրի արդյունքները, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող նոր գործառույթները, որոնք վերջերս վերապահվել են Հանձնաժողովին:

Մրցակցության միջազգային ցանց (ICN)

Մրցակցության միջազգային ցանցը բավարարել է Հանձնաժողովի՝ Մրցակցության միջազգային ցանցի «Շահերի պաշտպանություն» (Advocacy) աշխատանքային խմբի կողմից կազմակերպվող միջազգային աշխատաժողովը հյուրընկալելու հայտը: Աշխատաժողովը տեղի է ունենալու 2026 թվականի մարտի 16-ից 17-ը Երևանում:

Աշխատաժողովի անցկացումը Երևանում հնարավորություն կընձեռի անմիջականորեն մասնակից լինել միջազգային տնտեսական մրցակցության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման գործընթացին, խթանել մրցակցության օրենսդրության կիրարկման մեխանիզմները, միջազգային գործընկերներին ծանոթացնել Հանձնաժողովի վերջին տարիների ձեռքբերումներին՝ փոխադարձաբար ստանալով մրցակցության քաղաքականության կիրարկման ոլորտում նոր գիտելիքներ և փորձ: Այն կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետության ճանաչելիության բարձրացման և ամրապնդման, ինչպես նաև միջազգային հարթակներում ներգրավվածության ապահովման տեսանկյունից:

Հանձնաժողովը մասնակցություն է ունեցել նաև մայիսի 6-ից 9-ը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Էդինբուրգ քաղաքում կայացած Մրցակցության միջազգային ցանցի տարեկան համաժողովին, որի ընթացքում քննարկվել են մրցակցային քաղաքականության ու կիրարկման, հակամրցակցային համաձայնությունների, շահերի պաշտպանության, համակենտրոնացումների վերահսկման ու միակողմանի վարքագծին վերաբերող հարցեր, որոնք կարող են նպաստել անդամ պետությունների մրցակցային կառույցների գործունեության բարելավմանը:

Միացյալ ազգերի առևտրի և զարգացման համաժողով (UNCTAD)

Հանձնաժողովը հանդիսանում է անդրսահմանային հակամրցակցային համաձայնությունների և էլեկտրոնային առևտրում սպառողների իրավունքների պաշտպանություն աշխատանքային խմբերի անդամ: Հարկ է նշել, որ Հանձնաժողովը մասնակցել է հուլիսի 6-ից 12-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում կայացած Միացյալ Ազգերի 9-րդ համաժողովին, որի շրջանակում Հանձնաժողովի նախագահը ելույթով հանդես է եկել «Սպառողների շահերի պաշտպանությանը և մրցակցության օրենքի ու քաղաքականությանն ուղղված տեխնիկական աջակցություն և կարողությունների զարգացում» խորագրով նիստի ընթացքում:

ԱՊՀ մասնակից պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդ

Հանձնաժողովի նախագահը մասնակցել է նոյեմբերի 12-ին Մոսկվայում կայացած «Հակամենաշնորհային քաղաքականություն. գիտություն, պրակտիկա, կրթություն» խորագրով միջազգային գիտագործնական 10-րդ հոբելյանական համաժողովի շրջանակներում կազմակերպված կարտելների միջազգային ֆորումին և հանդես եկել ելույթով «Արհեստական բանականությունունը կարտելների դեմ» թեմայով նիստին:

Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են հոկտեմբերի 21-ից 22-ը ԱՊՀ մասնակից պետությունների Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (ՀՔՄԽ) 59-րդ և ՀՔՄԽ հակամենաշնորհային օրենսդրության խախտման համատեղ ուսումնասիրությունների շտաբի 45-րդ նիստերին: Նիստերի ընթացքում քննարկվել են «Մրցակցության

ոլորտում խախտումների հետևանքով քաղաքացիաիրավական պաշտպանությունը», «ԱՊՀ մասնակից պետություններում գների պետական կարգավորման (սակագների) ոլորտում նորմատիվ իրավական կարգավումը» թեմաներով զեկույցների նախագծերը, ինչպես նաև «Տեղեկատվական տեխնոլոգիաների և արհեստական բանականության գործիքների կիրառման ազդեցությունը ԱՊՀ անդամ պետությունների շուկաներում մրցակցության վիճակի վրա» թեմայով զեկույցի նախապատրաստման ընթացքը: Ներկայացվել է նաև մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության ոլորտում իրականացված օրենսդրական բարեփոխումները, Հանձնաժողովի գործութենության վերջին զարգացումները:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Բուդապեշտում Մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոն (OECD-RCC)

Բուդապեշտում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոնը (այսուհետ նաև՝ Կենտրոն) ՏՀԶԿ և Հունգարիայի մրցակցության մարմնի միջև համագործակցության նախագիծ է, որը ստեղծում է մրցակցության քաղաքականության և կիրարկման հնարավորություններ Հարավարևելյան և Արևելյան Եվրոպայում: Կենտրոնը պարբերաբար կազմակերպում է սեմինարներ և համաժողովներ, որոնց նպատակն է ակտիվորեն նպաստել Հարավարևելյան, Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի տարածաշրջաններում մրցակցային քաղաքականության և մշակույթի զարգացմանը, համագործակցության խթանմանը և տեղեկատվության ու փորձի փոխանակմանը:

Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են Կենտրոնի կազմակերպած մի շարք սեմինարներին՝ հնարավորություն ունենալով զարգացնելու իրենց գործնական ունակությունները մրցակցային վերահսկողության բազմաթիվ ուղղություններում:

Հարկ է նշել, որ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցության բաժնի առաջարկով «Տարածաշրջանի (Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա) մրցունակության գնահատման վերլուծություն» ծրագրի շրջանակներում 2026 թվականի մարտին Երևանում անցկացվելու է Բուդապեշտում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոնի արտագնա սեմինարը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

«Աջակցություն ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ մոնիթորինգի, իրականացման և հաղորդակցության» ծրագրի շրջանակում «Աջակցություն սպառողների շահերի պաշպանության օրենսդրության մոտարկմանը 2» տեխնիկական աջակցության ծրագիր

Ծրագրի նպատակն է սպառողների շահերի պաշտպանության օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի շարունակական մոտարկումը ԵՄ լավագույն փորձին, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության ոլորտում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը:

Օրենսդրական բարեփոխումների երկրորդ փաթեթով նախատեսվում է փորձագիտական թիմի աջակցությամբ մշակել փոփոխություններ՝ սպառողական պայմանագրերում անարդար պայմանների, մոլորեցնող և համեմատական գովազդի, սպառողների իրավունքների, ապրանքի վաճառքի պայմանագրերի վերաբերյալ ԵՄ դիրեկտիվներին համահունչ:

Ծրագրի 2-րդ բաղադրիչով իրականացվել են Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ներդրված «Սպառողի օգնական» գործիքի բարելավման աշխատանքներ:

Լեհաստանի մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության գրասենյակի հետ համատեղ իրականացվող «Աջակցություն Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին Հայաստանի Հանրապետությունում մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացման նպատակով» ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է.

- կիրարկման հատուկ մեթոդների, ինչպես նաև սպառողների իրազեկվածության բարձրացման մեխանիզմների և մեթոդների վերաբերյալ Հանձնաժողովի աշխատակիցների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
- ապրանքների համապատասխանության, էլեկտրոնային առևտրի, սպառողական պայմանագրերում անարդար պայմանների և մոլորեցնող ու համեմատական գովազդի ոլորտում ԵՄ դիրեկտիվների ընդունման համատեքստում ՀՀ օրենսդրության բացերի վերլուծության իրականացում,
- Հանձնաժողովի օրենսդրական փոփոխությունների վերջնական փաթեթի գնահատում,
- փորձի փոխանակման նպատակով փոխադարձ աշխատանքային այցեր:

Ծրագրի շրջանակում քննարկվել են սպառողների շահերի և մրցակցության պաշտպանության հիմնական խնդիրները՝ բանակցային ուժեղ դիրք, ուշ վճարումներ, թվային հարթակներ և այլն:

Անդրադարձ է կատարվել սպառողների շահերը խախտող գործելակերպի նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմների ներդրմանը և դրանց բացահայտման թվային գործիքակազմերի կիրառմանը՝ մասնավորապես ինֆլյուենսեր մարքեթինգի և առցանց վճարային գործարքների առնչությամբ, թվային գործիքների միջոցով սոցիալական ցանցերում մոնիթորինգի իրականացմանը, ապրանքի գնանշման կանոններին, ռազմավարական հաղորդակցությանը, միջազգային համագործակցությանը և այլ հարցերի, ներկայացվել են իրականացված ուշագրավ վարույթների օրինակներ:

Ներկայացվել է նաև ԵՄ-ում սպառողների շահերի պաշտպանության համակարգի գործունեությունը, սպառողների իրազեկվածության բարձրացման մեխանիզմները:

«Աջակցություն «Թվային շուկայի մասին» (DMA) և «Թվային ծառայությունների մասին» ակտերի (DSA) կարգավորումներին ՀՀ օրենսդրության ներդաշնակեցմանը» ԹԱՅԵՔՍ ԵՄ փորձագիտական առաքելության ծրագիր

Հաշվետու տարում բավարարվել է Հանձնաժողովի ԹԱՅԵՔՍ ԵՄ փորձագիտական առաքելության ծրագրի մասնակցության հայտը: Ծրագրի հիմնական նպատակը «Թվային շուկայի մասին» և «Թվային ծառայությունների մասին» ակտերի կարգավորումներին ՀՀ օրենսդրության ներդաշնակեցումն է՝ հաշվի առնելով Հայաստանի թվային շուկայի դինամիկան և կարգավորող միջավայրը:

Երկկողմ համագործակցություն

2025 թվականին մրցակցության օրենսդրության կիրարկման և մրցակցային քաղաքականության ոլորտում համագործակցության վերաբերյալ հուշագրեր են կնքվել Եգիպտոսի Արաբական Հանրապետության մրցակցային և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության շուկաների կարգավորման պետական մարմինների հետ:

ՄՍՇՊՀ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հասարակության իրազեկումը Հանձնաժողովի կողմից

Հանձնաժողովը շարունակել է հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը՝ 2025 թվականին գլխավորապես կենտրոնանալով սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող հարցերի լուսաբանման, լայն հանրության շրջանում տեղեկացվածության մակարդակի բարձրացման վրա:

Մասնավորապես՝

► Հանձնաժողովի նախաձեռնությամբ և Եվրոպական Միության օժանդակությամբ Սպառողների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան՝ մարտի 15-ին ընդառաջ կազմակերպվել է պաշտոնական միջոցառում, որին մասնակցել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյանը, ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար դեսպան Վասիլիս Մարագոսը, տնտեսավարող սուբյեկտներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ, այլ պաշտոնատար անձինք, որի շրջանակում տեղի է ունեցել նաև «Սպառողի օգնական» թվային հարթակի շնորհանդեսը: Պատրաստվել է ուղեցույց հոլովակի տեսքով՝ հարթակից օգտվելու քայլերը սպառողների համար հանրամատչելի ներկայացնելու նպատակով, որը ներկայացվել է միջոցառման շրջանակում և տեղադրվել Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Միջոցառումը լուսաբանվել է մի շարք զանգվածային լրատվության միջոցներով:

► 2025 թվականի օգոստոսի 1-ից ուժի մեջ են մտել լայնածավալ օրենսդրական փոփոխություններ, որի շրջանակում Հանձնաժողովն անվանափոխվել է և վերջինիս վերապահվել են սպառողների հավաքական շահերի պաշտպանության լիազորություններ: Այս համատեքստում նախորդող ժամանակահատվածում իրականացվել է հանրային իրազեկման արշավ, նախաձեռնվել են քննարկումներ գործարար համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես գնանշման նոր կանոնները, սպառողների շահերը խախտող գործելակերպի վերաբերյալ

նոր կարգավորումները վերջիններիս ներկայացնելու նպատակով, կազմակերպվել են մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ, հեռուստառեպորտաժներ, տարածվել են մամուլի հաղորդագրություններ:

► «Գործարար ալիք» ռադիոկայանի հետ համատեղ շարունակվել է «Խաղի կանոնները» նախագծի իրականացումը, որի շրջանակում հաշվետու տարում պատրաստվել և եթեր է հեռարձակվել Հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ հարցազրույցի ձևաչափով շուրջ 25 րոպե տևողությամբ ընդհանուր թվով 37 հաղորդում՝ մրցակցությանը և սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ:

► Ուսանողների և դպրոցականների շրջանում սպառողների իրավունքների վերաբերյալ գիտելիքների կատարելագործման նպատակով նախաձեռնվել է իրազեկման միջոցառումների շարք:

Մասնավորապես կազմակերպվել են ճանաչողական այցեր Հանձնաժողով, ապագա տնտեսագետներն ու իրավաբանները հնարավորություն են ունեցել մասնակցել Հանձնաժողովի նիստերին, Հանձնաժողովի ներկայացուցիչները դասախոսություններով են հանդես եկել հանրապետության տարբեր բուհերում:

Այս համատեքստում 2025 թվականին Հանձնաժողովը համագործակցել է մասնավորապես Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Ռուս-հայկական համալսարանի, Պետական կառավարման ակադեմիայի, Հայաստանի եվրոպական համալսարանի, Կիրառական գի-տությունների միջազգային համալսարանի, Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի հետ:

Համագործակցություն կրթական և գիտական հաստատությունների հետ

Հանձնաժողովը վերջին տարիներին որդեգրել է կարևոր մոտեցում՝ կապված ուսանողների՝ Հանձնաժողովի աշխատանքներում ներգրավվածության հետ: Ուսանողները նախ հնարավորություն են ունենում ներկա լինելու Հանձնաժողովի նիստերին՝ հասկանալու և իրականության մեջ տեսնելու Հանձնաժողովի աշխատանքը: Սա թույլ է տալիս ավելի արդյունավետորեն նրանց ծանոթացնել թե՛ Հանձնաժողովի լիազորությունների և գործունեության հետ, թե՛ Հանձնաժողովում հետագայում աշխատանքի և հնարավոր մասնագիտական փորձառության հեռանկարների հետ:

2025 թվականին Հանձնաժողովի նիստերին, Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ իրազեկումներին մասնակցել է 55 ուսանող Հայ-Ռուսական, Հայաստանի պետական տնտեսագիտական և Երևանի պետական համալսարաններից: 2025 թվականին հանձնաժողովն ունեցել է 21 պրակտիկանտ և պրակտիկանտներց 1-ը Հանձնաժողովում գրանցվել է որպես փորձնակ: Նույն թվականին Հանձնաժողովն ունեցել է 5 փորձնակ, որոնցից մեկը հետագայում շարունակել է աշխատել Հանձնաժողովում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՒՆԻ 86 ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ

- **62** Քաղաքացիական ծառայողներ
- **10** Հայեցողական պաշտոններ
- **7** Ինքնավար պաշտոններ
- **7** Ընդհանուր մասնագիտություն ունեցողներ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ

14 Միացել են

15 Հեռացել են

Իգական **71%**

Արական **29%**

Կառուցվածքային ստորաբաժանումներում փաստացի զբաղեցրած ղեկավար պաշտոններ

8 Կին

5 Տղամարդ

Մասնագիտական ստորաբաժանումներ

5 Կին

0 Տղամարդ

Աջակցող ստորաբաժանումներ

Աշխատակիցները՝ ըստ տարիքային խմբերի

- **33%** Մինչև 29 տ.
- **22%** 30-39 տ.
- **28%** 40-49 տ.
- **17%** 50-65 տ.

Կրթություն



- Մագիստրոս
- Բակալավր
- Գիտությունների թեկնածու

Մասնագիտություն



- Տնտեսագետ
- Իրավագետ
- Այլ

Հանձնաժողովում աշխատում են՝



- մինչև 1 տարի
- 2-5 տարի
- 11-15 տարի
- 6-10 տարի
- 15+ տարի

2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2026 թվականի համար Հանձնաժողովը որպես առաջնահերթություն է դիտարկում **սպառողների շահերի պաշտպանության համակարգի ամբողջացումը**՝ թե՛ օրենսդրական, թե՛ պրակտիկ դաշտում: Այս իմաստով առաջնային է սպառողների շահերին վերաբերող օրենսդրական երկրորդ փաթեթի ամբողջական և վերջնական ընդունումը և գործարկումը, որը պետք է զուգորդվի ընդունված կանոնների արդյունավետ կիրարկմամբ: Այս համատեքստում Հանձնաժողովը ձեռնամուխ է լինելու զարգացնելու և ընդլայնելու սեփական ռեսուրսային բազան: Առաջին հերթին մարդկային կապիտալի զարգացման նպատակով Հանձնաժողովն իրականացնելու է աշխատակիցների կարողությունների և հմտությունների շարունակական զարգացում՝ լավարկելու և կատարելագործելու թե՛ վարչարարական, թե՛ իրազեկման գործառույթների կատարման իր պոտենցիալը: Սրան զուգահեռ Հանձնաժողովը շարունակելու է ընդլայնել նաև միջազգային համագործակցությունը գործընկեր կազմակերպությունների և կառույցների հետ՝ սպառողների շահերի պաշտպանության ոլորտում միջազգային լավագույն փորձը տեղայնացնելու և գործարկելու նպատակով:

2026 թվականին նախատեսվում է զարգացնել ու ամրապնդել նաև սոցիալական կարևոր ոլորտներում Հանձնաժողովի մոնիթորինգային վերահսկողության լիազորությունները՝ շուկայի մասնակիցներին տրամադրելով ոլորտում տեղի ունեցող գործընթացների մասին արագ, հուսալի և բազմակողմանի տեղեկատվություն:

Թվային շուկաների արագ զարգացումը պայմանավորում է ինչպես նոր հնարավորությունների ի հայտ գալը, այնպես էլ մի շարք կառուցվածքային մարտահրավերների ձևավորումը, որոնք հատկապես ընդգծվում են մրցակցության ապահովման և կարգավորման համակարգերի համատեքստում: Այդ մարտահրավերների համակողմանի հասցեագրման համար անհրաժեշտ է իրականացնել թե՛ օրենսդրական փոփոխություններ, և թե՛ դրանց կիրարկման մոտեցումների և ուղղությունների վերաիմաստավորում, ուստի Հանձնաժողովը ձեռնամուխ է լինելու մրցակցային կարգավորման հետևողական լավարկմանն ու զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացմանը՝ նպաստելով թվային շուկաների կարգավորման արդյունավետության բարձրացմանը:

2026 թվականին Հանձնաժողովի համար ևս մեկ առաջնահերթություն է լինելու **թվային գործիքակազմի կատարելագործումը և ընդլայնումը**: Այս մասով առաջնային է լինելու «Սպառողի օգնական» հարթակի զարգացումը՝ ուղղված սպառողների համար էլ ավելի հասանելի, թափանցիկ և հեշտ գործիքների ներդրմանն ու կիրառմանը: Զուգահեռաբար զարգացվելու և

կատարելագործվելու են նաև Հանձնաժողովի մրցակցության պաշտպանության նպատակով իրականացվող վարչարարական գործողություններում օգտագործվող թվային գործիքակազմերը:

Հանձնաժողովն իր ջանքերը կենտրոնացնելու է նաև նոր լիազորությունների ձեռքբերման համատեքստում սեփական **ռազմավարական մոտեցումների վերանայմանը**, որի համար 2026 թվականին Հանձնաժողովը նախատեսում է ընդունել նոր ռազմավարական փաստաթուղթ, որը իր մեջ կմիավորի թե՛ մրցակցության և թե՛ սպառողների շահերի պաշտպանության լիազորությունների վերաբերյալ սահմանված առաջնահերթությունները, ակնկալվող արդյունքները և դրանց հասնելու ուղիները: Փաստաթուղթը կհանդիսանա այն հիմնաքարը, որի վրա հետագա տարիների ընթացքում կկառուցվի Հանձնաժողովի ամբողջ գործունությունը և կապահովվի մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության ներդաշնակ իրականացումը: Ընդունված ռազմավարությունն իրականացնելու նպատակով Հանձնաժողովը 2026 թվականի ընթացքում մշակելու է նաև դրանից բխող գործողությունների, արդյունքների գնահատման մեթոդաբանության և վերահսկման վերաբերյալ առանձին փաստաթղթեր:

Ընդհանուր առմամբ 2026 թվականին Հանձնաժողովը շարունակելու է իր ակտիվ և բազմակողմ գործունեությունը՝ **հանուն մրցունակ տնտեսության և պաշտպանված սպառողի:**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՈՒԺԵՂ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ՏՈՒԳԱՆՔ	
«ԲՐԵՆԴԼԻԴԵՐ» Հ/Ձ ՍՊԸ	https://www.brandleader.am/ Երևան, Շենգավիթ, Ն. Շենգավիթ 11 փ., 1/14
«ԷՎՐԻԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	https://evrikasupermarket.am/ Երևան, Շարուրի փ., 28/2, բն. 58
«ԷՐԵԲՈՒՆԻ ԹՐԵՅԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Ավետիսյան փ., շ 23, բն 19
«ԱՐԱՐԱՏԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ	https://www.araratwinecognac.com/ Արարատ, գ. Արարատ, Ռաֆֆու փ., տ. 1/1
«ՈՍԿԵՎԱԶԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ	https://voskevaz.am/ Արագածոտն, Ոսկեվազ, 8-րդ փ., շ 19
«ՄԱՊ» ՓԲԸ	https://www.map.am/ Արմավիր, գ. Լենուղի
«ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	http://www.aparantan.am/ Երևան, Աջափնյակ, Սիլիկյան թաղամաս 13-րդ փ., տ 54
«ԱՎՇԱՐ ՊՐՈԴ» ՍՊԸ	Արարատ, Ավշար, Գարեգին Նժդեհ փ., շ 20
«ՊԱԼՄԻՐԱ ԱՌԵՎՏՐԻ ՏՈՒՆ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Թադևոս Ավդալբեգյան փողոց, տ 12
«ԱՐՏԱՇԱՏԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	https://www.artfood.am Արարատ, Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ., շ 145
«ԻՋԵՎԱՆԻ ԳԻՆՈՒ-ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ	https://ijevangroup.am/ Տավուշ, Իջևան, Երևանյան, 9
«ԳԼԱՆԺ ԱԼԿՈ» ՍՊԸ	Կոտայք, Արամուս, Կենտրոնական փ., 62 շ.

«ԱԳԱԹԱՏ-ԳՈԼԴ» ՍՊԸ	http://www.agatatgold.am/ Արարատ, Նոր Կյուրին, 7 փ., տ 2
«ՎԵԴԻ ԱԼԿՈ» ՓԲԸ	https://vedi-alco.am/hy Արարատ, գ. Գինեվետ
«ՏԳ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	Արարատ, Արտաշատ, Բակունցի փ., 38/1
«ԱՐԱՐԱՏ ՍՆՆԴԻ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍՊԸ	https://www.ararat-food.am Երևան, Արաբկիր, Վ. Դավթյան փ., տ 13
«ԱՎԵԼԻԱՑ» ՍՊԸ	https://nayirifood.com Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Շրջանցիկ Թունել, 2/5
ԵՐԵՎԱՆԻ «ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	https://www.armchampagne.am/ Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Թբիլիսյան խճ. 20
«ԼՈՒՍՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	https://www.chinarsupermarket.am/hy Երևան, Արաբկիր, Ադոնցի փ., շ 6, բն. 333 շին.
«ՍԱՍ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	https://www.sasgroup.am/ Երևան, Կենտրոն, Մաշտոցի պ., 18
«ԲԱԳՐԱՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	https://bagrat-group.com/ Երևան, Շենգավիթ, Արշակունյաց պ., 127/24
«ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Առնո Բաբաջանյան փ., 2/15
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ	
«ԾԻՐԱՆ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	https://tsiran.am/hy/ Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Առնո Բաբաջանյան փ., 2/15
«ԳՈԼԴԵՆ ԳՈՈՒԹ» ՓԲԸ	http://goldengoat.am/ Վայոց Ձոր, գ. Գողթանիկ
«ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ	www.yerevanmarket.am/ Երևան, Նար-Դոսի փ., 2
«ԷՍԷՌ ՖՈՒԴ» ՍՊԸ	Երևան, Հակոբ Հակոբյան փ., 3/2
«ՎԱՆ ԱՐԴԻ» ՍՊԸ	Երևան, Լազոյի փ., շ 6, բն. 67
«ՄԵՂՐՈՒ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ	Երևան, Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ փ., 45 շ., բն. 5/1

«ՍԻ ԱՐ ԷՖ ՌԻԹԵՅԼ» ՍՊԸ	Գյումրի, Ջիվանու փ., տ 153
ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ՏՈՒԳԱՆՔ	
««ՏՈՉ-ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ, «ԻՆՆԹԵՔ» ՍՊԸ, «ՀԴՄ ՇՏՐԻԽ» ՍՊԸ, «ՏԵՐՄԻՆԱԼ ՍԵՐՎ» ՍՊԸ, «ՄԵՐԻ-ՔՐԻՍՏ» ՍՊԸ, «ՍՄԱՐԹ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ ԵՎ «ՔՅՈՒ ՏԵՐՄԻՆԱԼ» ՍՊԸ» ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ	https://touchmaster.am/ Երևան, Կորյունի փ., 7, բն. թիվ 24 տարածք
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	https://armenia-am.gazprom.com/ Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճ., 43
««ՋԻԷՍ1 ԱՐՄԵՆԻԱ», «ԱՅԴԻԹԵՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ «ՋԻ-ԷՍ-1 ԱՐՄԵՆԻԱ»» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ	https://gs1am.org/ Երևան, Արաբկիր, Բաղրամյան փ., 64 շ., բն. 15
ՉՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ՏՈՒԳԱՆՔ	
«ԿԱՆՏՈՒՍ» ՍՊԸ	Լոռի, Վանաձոր, Զորյան փ., շ 79, բն. 34
«ՍԵՅՖ ՊՐՈԴ» ՍՊԸ	Երևան, Շենգավիթ, Աէրացիա, 1/4
«ԿՈՆՍԵՆ» ՍՊԸ	Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Սեբաստիա
«ՅՈՒՆԻ ՌԵՆՏ» ՍՊԸ	Երևան, Մաշտոցի պող, թիվ 8/7
«ԷՅԲԻՍԻ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Մաշտոցի պ., շ 8/6
«ԱԳՐՈՆՈՄԻԱ» ՍՊԸ	Երևան, Նոր Նորք, Հունան Ավետիսյան փ., շ 12, բն. 6
«ՌԱՅՋԵՄՍ» ՍՊԸ	Երևան, Դավթաշեն, 1 թղմ., շ 48, բն. 70
«ՌՈՄԵԴԱ ՀԱՐԱՎ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Երվանդ Քոչար, 8
«ՊԼԱՏԻՆԻՈՒՄ ԳԱՐԴԵՆ» ՍՊԸ	Երևան, Շենգավիթ, Շիրակի փ., շ 47/12
«ԳՐԻՆ ՖԱՐՄԵՐ» ՍՊԸ	Երևան, Շենգավիթ, Մանանդյան փ, շ 33/4
«ԱՆԱՄԵԼ» ՍՊԸ	Երևան, Էրեբունի, Նոր Արեշ 24 փ., տ 53
«ՄԵԼՄԱՐ 21» ՍՊԸ	Արարատ, Այնթապ, 18, տ 3
«ԻՆՏԵՐԿԱՐԳՈ ԱՐՄ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Վրացական փ., 21/1, բն. 18
«ԱՐԿՏԵՐԱ ԷՅԷՄ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Բրյուսովի փ., շ 6
«ԷՍՋԻԹԻ ՀՈԼԴԻՆԳ ԼԻՄԻԹԵԴ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	
«ԻՆՏԵՐՆԵՏ ՊՐՈՅԵԿՏՆԵՐ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Վերին Անտառային փ., 138/2
«ՀԱՆԹԵՐ ՖՈՒԴ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Կոմիտասի պ., 59
«ԷՅ ԴԻ ԷՅ ԹԵՔ» ՍՊԸ	https://adatech.am/ Երևան, Ավան, Ծարավ Աղբյուրի փ., 55/5

«ԴՈՄ-ԴԵՆԻԵԼ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Իսրայելյան, շ 43, բն. 85
«ԷՎԱ ԻՄՓՈՐԹ» ՍՊԸ	Երևան, Նորք-Մարաշ, Սերո Խանզադյան փ., տ 142
«ԴԵՎՍՈՖՏ ԷՅԷՄ» ՍՊԸ	https://devsoft.am/ Երևան, Կենտրոն, Կորյունի փ., 14, բն. 9-րդ հարկ
«ԴԻՎԵԼՈՓԸՐ ԷՔՍՊՐԵՍ ԻՆՔՈՐՓՈՐԵՅԹԻԴ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	
«ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ	https://steel.am/ Կոտայք, Հրազդան, Կենտրոն թաղ., շ 6, բն.39
«Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	https://ecenergy.am/ Կոտայք, Ձորաղբյուր, Ամառանոցային փ. շենք 34, 3-րդ հարկ, բն. 11
«4 ՔՈՄՓ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Հանրապետության փ., շ 62, բն. 110
«ՆՈՐ ՏԵԽՆՈ» ՍՊԸ	Կոտայք, Աբովյան, Սևանի փ., տ 11 շին.
«ԷՅ.ԴԻ.ԷՄ. ԴԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ	Կոտայք, Աբովյան, Է. Պետրոսյան, 1/1/5 շ.
«ՊԱՐԿ ԷՆ ԷՅ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Բուզանդ փ., 7, բն. 4 տար.
«ԴԱՅՄՈԹԵՔ» ՓԲԸ	Արագածոտն, ք. Թալին, Մեխանիզատորների, շ 10
«ՇՈԿՈ» ՍՊԸ	Երևան, Շենգավիթ, Արշակունյաց, շ 52, բն. 52
«ԿԱՍԿԱԴ ԷՆԵՐԳՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Աղյուսագործների 2 փ., շ 37
«ՔՐԻՍԹԱԼ ՎՅՈՒ ԸՓԱՐԹՄԵՆԹՍ» ՍՊԸ	Երևան, Շենգավիթ, Արցախի փ., շ 14ա, բն. 3
«ՆՈՐՔ ՀԱՈՒՍ» ՍՊԸ	
«ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դ. Անհաղթի փ., 6
«ԷԴԵԼՎԵՅՍ ԿԱ» ՍՊԸ	Երևան, Նոր Նորք, Նանսեն 1-ին նրբ., շ 8, բն. 25
«ՏԵԽՆՈՏՈՒՆ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Անտառային փ., շ 120/14
«ԴԱՅՄՆԴ ՍՏԱՆԴԱՐՏ» ՍՊԸ	Արմավիր, Նորակերտ, 8 փ., տ 11
«ՌՈՔ ԲԵՐԻ» ՍՊԸ	https://www.rockberry.am/ Կոտայք, Կամարիս, 8 փ. 1 նրբ., 8, բն. ջերմատուն

«ԳՐԻՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ	Գեղարքունիք, Լճաշեն, Հողամաս, 6
«ԳԼՈԲԱԼ ՖԻՇ» ՍՊԸ	Արարատ, Դարբնիկ, Հող 1
«ԾԻՐԱՆ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	https://tsiran.am/hy/ Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Առնո Բաբաջանյան փ., 2/15
«ՅԱՆԴԵՔՍ ՍՆՈՒՆԴ ԷՅԷՄ» ՍՊԸ	https://eats.yandex.com/ Երևան, Կենտրոն, Մոսկովյան 35
«ՅԱՆԴԵՔՍ.ՏԱՔՍԻ ԷՅԷՄ» ՍՊԸ	https://taxi.yandex.com/hy_am/ Երևան, Կենտրոն, Մոսկովյան 35
«ՅԱՆԴԵՔՍ ԴԵԼԻՎԵՐԻ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ	https://delivery.yandex.com/am-hy/ Երևան, Կենտրոն, Մոսկովյան 35
«ՏԵԽ ՍԵՐՎԻՍԵՍ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Մոսկովյան 35
«ՅԱՆԴԵՔՍ.ՎԱՌԵԼԻՔ ԷՅԷՄ» ՍՊԸ	https://yandex.com/ Երևան, Կենտրոն, Մոսկովյան 35
«Յ.Ե. ՀԱԲ ՀԱՅԱՍՏԱՆ» ՍՊԸ	https://yandex.com/ Երևան, Կենտրոն, Մոսկովյան 35
«ՐԱՅԴԹԵՔ ԷՅ ԷՄ» ՍՊԸ	https://taxi.yandex.com/hy_am/ Երևան, Կենտրոն, Մոսկովյան 35
«ՈՒԱՅ.Ի.ՀՈԼԴԻՆԳ ԼԻՄԻԹԵԴ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ԱՄԷ, Դուբայ, Դուբայի Միջազգային Ֆինանսական Կենտրոնի Գեյթ Դիստրիքթ Գեյթ Բիլդինգ GD-GB-00-15-BC-01 Բաժանմունք, 15-րդ հարկ
«ՌԱՅԴ ԹԵՔՆՈԼՈՋԻ ԳԼՈԲԱԼ ԷՖԶԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ԱՄԷ, Դուբայ, Դուբայ Ինտերնետ Սիթի, 4-րդ շին., 1-ին հարկ, 101
«ԻՆՏԵՐՍԵՐՉ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ՌԴ, Մոսկվա, Սադովնիչեսկայա 82
«ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	
««ԱՌՆԻԿԱ» ՍՊԸ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ՎԱՀԵ ԳԱՌՆԻԿԻ ՎԱՐՍԱՆՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՇԵՍ ՎՐԵԺԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ» ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ	Արմավիր, Փարաքար, Թաիրով Դեմիրճյան թ.4փ., տ 5
«ՇԻՏԱԿՖԱՐՄ» ՍՊԸ	Լոռի, Մյասնիկյան փ., շ 76
«ԷՐԵԲՈՒՆԻ ԷՆԹԵՐՓՐԱՅԶ» ՓԲԸ	Երևան, Կենտրոն, Վարդանանց փ. 8-րդ փակուղի, թիվ 3, բն. տարածք

«ԷՅՋ ԲԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	https://hbgroup.am/aboutus/ Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Պարույր Սևակ, 51/11
«ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊԸ	Երևան, Աջափնյակ, Ֆուչիկի փ., 27
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ	
«ՆՈՐԴԻՍ» ՍՊԸ	Երևան, Շենգավիթ, Մանանդյան փ., շ 33/3, բն. 2/6
«ԱՄՏՈԳ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Իսրաելյան փ., 37, բն. 1/1 տարածք
«ՆՈՐՔ ԿԱՊԻՏԱԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆԿ.» ՓԲԸ	
«ԶԵԹ ԸՆԴ ԷՅ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Գրիբոյեդովի փ., շ 25/27
«ԻՍՈԼԱ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Գրիբոյեդովի փ., շ 25/27
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ ԽԱԽՏՈՂ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ ՏՈՒԳԱՆՔ	
Ա/Ձ ԱՐՄԱՆ ԽԱԼԱՖՅԱՆ	
«ԿՎԱԴՐԱ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Ն. Տիգրանյան 1 փակ., շ 3
«ԻԳՆԱՅԹ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Մաշտոցի, շ 7, բն. 5
«ԱԳ 21» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Այգեձոր փ., 52
«ԱՔՍԵՍ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Մաշտոցի պ., շ 40ա, բն. 45
Ա/Ձ ԱՐՍԵՆ ՉԵՐՔԵԶՅԱՆ	
«ԻԴՐԱՄ» ՍՊԸ	https://www.idram.am/ Երևան, Կենտրոն, Նալբանդյան փող., 48/1 շ., 3-րդ եվ 4-րդ հարկեր
«ԻՆԵՍՍԱ» ՍՊԸ	Արարատ, Այնթապ, 1 փ., տ 6
«Ա/Ձ ՍԵԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ ԵՎ «ՓՈՔՐԻԿ ՀԱՐՎԱՐԴ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ» ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ	Երևան, Շենգավիթ, Մանթաշյան փ., տ 75
«ՍՄՈՔԻՆԳ» ՍՊԸ	Արմավիր, Վաղարշապատ, Կարճիկյան փ. 1-ին փկղ., տ 5
«ՏՈԲԱԿՈՆԻՍՏ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Ա.Ավետիսյան փ., շ 112, բն. 15
«ԱՎԵՏ-ՄՀԵՐ» ՍՊԸ	Գեղարքունիք, Մարտունի, Սայաթ-Նովա, Տ 39
Ա/Ձ ՍԱՄՎԵԼ ՉԵՐՔԵԶՅԱՆ	
Ա/Ձ ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ	
Ա/Ձ ԿԱԻ ՋԻԱՔՍԻ	
Ա/Ձ ԼՈՒՍԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ	

Ա/Ձ ՅՈՒՐԻ ԱՂԱԲԱԼՅԱՆ	
«ՆԱՎՍՅԱԿԻ» ՍՊԸ	Երևան, Ավան, Խուդյակովի 3-րդ նրբ., տ 60ա
«ԴԻԻՓ ԵՍ» ՍՊԸ	Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Յ. Լեփսիուսի փ., շ 29, բն. 39
«ՅՈՒՆԻՔՍ» ՍՊԸ	Երևան, Շենգավիթ, Մանթաշյան փ., շ 51, բն. 38
«ՀՈՒԿԱՀ ԹԱՅՄ» ՍՊԸ	Երևան, Ռիգայի փ., 126/4, բն. 38
«ԴԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Կիևյան, 3, բն. 10
«ԷՔՍԿԼՅՈՒԶԻՎ ՍԹՈՐ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Կիևյան փ., շ 3, բն. 10
«ԶԻԳԶԱԳ» ՍՊԸ	https://www.zigzag.am/ Երևան, Կենտրոն, Հյուսիսային պ., 1 շ., բն. 18 տրծք
«1 ԷՅ ԷՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ահարոնյան փ., 2/3
«ԱՅ ՓԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ	Շիրակ, Փանիկ, 26 փ., տ 5
«ՍԹԻՄ ՎԵՅՓ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Ամիրյան փ., 2, բն. 2/8
Ա/Ձ ԱԼԵՔՍԱՆ ՏՈՆՈՅԱՆ	
«ՋՈՅՆ ԱՍ» ՍՊԸ	Արարատ, Մասիս, 1-ին փ., 22/2
«ԹԱՄԱՐԱ ԵՎ ԱՆԻ» ՍՊԸ	https://www.ani.am/ Երևան, Դավթաշեն, 3 թղմ., շ 10, բն. 9
«ԱՐԱՔՍ-2» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ	http://www.ecokat.am/ Գեղարքունիք, Ակունք
««ՄԵԳԱ ՆԵՏ» ՍՊԸ ԵՎ «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ» ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ	Լոռի, Վանաձոր, Տիգրան Մեծի պ., շ 63, բն.13
«ՋԻՋԻ» ՓԲԸ	https://www.team.gg/ Երևան, Արաբկիր, Մամիկոնյանց փ., 44/4
«ՍՄՈՔ ՀԱՈՒՍ» ՍՊԸ	Երևան, Ավան, Խուդյակովի 3 նրբ., տ 60ա
«ԲԻՈՊՐՈԴՈՒԿՏ» ՍՊԸ	https://bioproduct.am/ Երևան, Արաբկիր, Ա.Խաչատրյան փ., 39 տ.
«ԻԳԻԹ» ՍՊԸ	http://www.igit.am Շիրակ, Ազատան, 54, 6
«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ	Լոռի, Վանաձոր, Թատերական փ., շ 6
«ՆՈՈՒԹԲՈՒՔ ՍԹՈՐ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Սայաթ-Նովա, 22
«ՈՍԿԵ ՍԵՐ» ՍՊԸ	Աշոցք, գ. Աշոցք
«ՎԵՅՓ 2» ՍՊԸ	Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Կ. Ուլնեցու փ., շ 6, բն. 5

«ՎԵՅՓՍԹՈՌ.ԷՅԷՄ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Այգեձորի փ., տ 46/3
Ա/Ձ ԱՐՍԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ	
«ՎԻ ԱՌ ՄԵԴԻՔԱԼ» ՍՊԸ	Երևան, Նոր Նորք, Սաֆարյան փ., 14/7
«ԲԻԱԼԿԱ» ՍՊԸ	Կոտայք, Աբովյան, Արդյունաբերական 2-րդ թաղամաս, 28/3
«ՈՍԿԵ ԿԱԹ» ՍՊԸ	Երևան, Դավթաշեն, Դավթաշեն 3 թաղ., շ 7, բն.4
«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	http://tvnet.am/ Երևան, Աջափնյակ, Էստոնական փ., շ 12/1, բն. տարածք 134
«ԿԱՐՈԼԻՆԱ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Վ.Դավթյան փ., 13
«ԷՋՄԻԱԾԻՆ ԿԱԹ» ՍՊԸ	Արմավիր, Վաղարշապատ, Իսակովի փ., 59
«ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ	https://urartuonline.am/ Երևան, Դավթաշեն, Դավթաշեն 1թ. 52-24
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ	https://www.telecomarmenia.am/hy/ Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ազատության պ., 24/1
«ՍԻԹԻ» ՍՊԸ	https://yerevan-city.am/ Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Մալաթիա Սեբաստիայի փ., 143
«ՔԻԴԶԿՈ» ՍՊԸ	Կոտայք, Պռոշյան, գ. չաուշի փ. 3 նրբ., տ 6
«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	https://www.armchampagne.am/ Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Թբիլիսյան խճ. 20
«ՊԱՄ ԸՆՏԱՆԻՔ» ՍՊԸ	https://www.pam.am/ Երևան, Էրեբունի, Տիգրան Մեծի փ., շ 54ա, բն. 10
«ԷՆԵՐԳՈ ԱՐՄ» ՍՊԸ	Երևան, Աջափնյակ, Հալաբյան փ., 9/7
«ԲՐԵՆԴԼԻԴԵՐ» Հ/Ձ ՍՊԸ	https://www.brandleader.am/ Երևան, Շենգավիթ, Ն. Շենգավիթ 11 փ., 1/14
«ԳՈՒԴ ՍՈՖԹ» ՍՊԸ	https://goodwin.am/am Երևան, Շենգավիթ, Արշակունյաց փողոց, շ 67
«ԿԱԲԱՐԿՈ» ՍՊԸ	https://www.adjarabet.am/hy Երևան, Աջափնյակ, Հալաբյան փ., 22/5
«ԴԻՋԻԹԵՅՆ» ՍՊԸ	https://www.digitain.com/ Երևան, Կենտրոն, Ծովակալ Իսակովի փ., 15/3

«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՓԲԸ	https://www.softconstruct.com/ Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան փ., թիվ 20
«ՖԱՎՈՐԻՏ 19» ՍՊԸ	Երևան, Շենգավիթ, Շիրակի փ., 1/68
«ԱԼՖԱԲԵԹ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Ա. Խաչատրյան փ., 6
«ՖԱՄԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	https://www.fami.am/ Երևան, Կենտրոն, Մաշտոցի պողոտա, շ 18, 52շին.
«ՊԱՆԴԱ ՔԵՅԸՐ» ՍՊԸ	Կոտայք, Աբովյան, Երիտասարդական, 5 տ
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ	
«ԱԼՖԱ ՊԼՅՈՒՍ ՎԵՅՓ» ՍՊԸ	Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շրջանային փ., տ 44
Ա/Ձ ՆՈՐԻԿ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ	
«ԱՅ ՎԵՅՓ» ՍՊԸ	Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի փ., շ 75, բն. 72
«ՏՈԲԱԿՈ ՀԱՈՒՍ» ՍՊԸ	Արմավիր, Վաղարշապատ, Շահումյան փ., տ 17
«ԱՐՔԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Մետրո Բարեկամության անցում, 164 տղվ
«ԱՐՏԱՇԱՏ-ՎԻՆԿՈՆ» ՓԲԸ	https://www.artashat-vincon.am/ Արարատ, գ. Մխչյան
«ԻՆՏԵՐՏՐԱՆՍ» ՍՊԸ	Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ռուբինյանց, 3/7
Ա/Ձ ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ	
Ա/Ձ ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ	
Ա/Ձ ՌԱՖԱՅԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ	
Ա/Ձ ԼԵՎՈՆ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ	
«ՖՈՒՏՈՒՐԵ» ՍՊԸ	Լոռի, Գուգարք, 1 փ., տ 16
«ՕՇՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Վազգեն Սարգսյան փ., շ 10, բն. 65
«ՋԵՅ ԷՄ ԷՅ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Պարոնյան փ., 8 շ., բն. 13
«ՊՌ ԻՄՊՈՐՏՍ» ՍՊԸ	Երևան, Նոր Նորք, Թոթովենցի փ., շ 14, բն.16
«ՌՈՒԲԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ 78» ՍՊԸ	Երևան, Շենգավիթ, Արշակունյաց պ., 34
«ՉԵՐՐԻ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	Երևան, Շենգավիթ, Արարատյան փ., տ 67/1
«ԿԱԼԻՈՆԻ ԱՐՄ» ՍՊԸ	Արագածոտն, Օշական, Դպրոցական 1 փ. 2 նրբ., տ 19

«ՄԵԳԱ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ	Լոռի, Սպիտակ, Այգեստան փող. 2նրբ., տ 6
Ա/Ձ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ	
Ա/Ձ ՆԱՐԵԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ	
«ԿԱՉ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Բաբաջանյան փ., շ 153/1, բն. 34
«ԱԼՖԱ Ա» ՍՊԸ	Երևան, Էրեբունի, Նոր Արեշ 22 փ., տ 90
«ԲԼՈՒ ՍՄՈԿ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Բաղրամյան 4 նրբ., տ 40
«ՍԻՆԵՐԳԻԱ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Օրբելի փ., շ 18, բն. 2
Ա/Ձ ԼԻԱՆԱ ՀՈՒՆԱՆՅԱՆ	
Ա/Ձ ԱԼԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	
«ՇԵԼԲԻ» ՍՊԸ	Կոտայք, Քասախ, Ա. Մարտիրոսյան, 3, բն. 30
«ՏՈԲԱԿՈ ՀԱՈՒՍ» ՍՊԸ	Արմավիր, Վաղարշապատ, Շահումյան փ., տ 17
«ՍՏԵՓԱՆՅԱՆՆԵՐ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Ն. Տիգրանյան փ., շ 5, բն. 29
Ա/Ձ ՀՌԻՓՍԻՄԵ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ	
«ՄՈՏԿՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ	Սյունիք, Գորիս, Բակունցի, 57
«ՄԻԼՔ ԱՓ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա, շ 3, բն. 46 ոչ բն. տք
«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	https://vtelecom.am/ Երևան, Աջափնյակ, Գ.Չաուշի փ., շ 11/1
«ՍԻ ԱՐ ԷՖ ՌԻԹԵՅԼ» ՍՊԸ	https://carrefour.am/am/ Երևան, Նոր Նորք, Ա. Միկոյան փ., 15
«ԷՎՐԻԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	https://evrikasupermarket.am/ Երևան, Շարուրի փ., 28/2, բն. 58
«ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԽ» ԲԲԸ	Կոտայք, Արզնի, Արզնի-Աբովյան խճ., 5/2
«ԱԴԱՄԻՈՒՄ» ՍՊԸ	https://www.adamium.com/hy Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ռուբինյանց փ., 21/3, բն. 19
«ՆՈՐ ԶՈՎՔ» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Հանրապետության փ., 71

«ՄՈՎԱ» ՍՊԸ	Շիրակ, Գյումրի, Ղարսի խճ., տ 6, բն. 1
«ԱԿՏԻՎ ԵՐԵԽԱՆԵՐ» ՍՊԸ	Արարատ, Արարատ, Թևոսյան փ., տ 43
ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՈՒԳԱՆՔ	
«ԷԼԻՏ-ՇԵՆ» ՍՊԸ	Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Կ. Ուլնեցու 1փակ, շ 1, բն. 19
«ԱՐԱ-ԱՐԵԳ» ՍՊԸ	Գեղարքունիք, Լճաշեն
«ԽԱՔ» ՍՊԸ	Արարատ, գ.Նարեկ
«ԴԵԱԳԱ» ՍՊԸ	Երևան, Էրեբունի, Էրեբունի, շ 34, բն. 62
«ՎԱՆՈՒՇ ԵՎ ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ	Արմավիր, Քարակերտ
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ	
«ԱՂՄ» ՍՊԸ	Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Մ. Ավետիսյան 4փ., 20 շ., բն. 16
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ	https://www.telecomarmenia.am/hy/ Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ազատության պ., 24/1
«ՄՈՒԼՏԻ ՏԱԲԱԿ» ՍՊԸ	https://www.multitabak.am/hy Երևան, Կենտրոն, Արգիշտիի փ. 9
«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ	https://www.ucom.am/ Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դավիթ Անհաղթի 8/4
«ԿԱՐԿՈՒՄ ԱԼԿՈ» ՍՊԸ	Լոռի, Վանաձոր, Աղայան փ., շ 65, բն. 31
Ա/Ձ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ	
«ՆԵՎԻՍ» ՍՊԸ	Երևան, Ա Միկոյան փ, 17/2
«ԱՎԵՐՍ» ՓԲԸ	Երևան, Արաբկիր, Ն. Տիգրանյան 1 փակ., շ 3
«ԼԵՔՍ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	http://www.lextobacco.am/ Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Կուրղինյան նրբ., շ 13, բն. 32
«ԲԱԳԴԱՐ ԻՄԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Նաիրի Զարյան փ., 22ա
«ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ» ՍՊԸ	https://cigaronne.com/hy/ Երևան, Նոր Նորք, Ա.Հովհաննիսյան, 24
«ՍԻՆԵՐԳԻԱ» ՍՊԸ	Երևան, Արաբկիր, Օրբելի փ., շ 18, բն. 2

«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ	https://www.grandtabak.com Արարատ, Մասիս, Հրանտ Վարդանյան փ., 10
«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ» ՍՊԸ	https://www.grandtabak.com/ Երևան, Շենգավիթ, Հրանտ Վարդանյան, 22
Ա/Ձ ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՄԱՐՑԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՈՒՄ	
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՏՈՒԳԱՆՔ	
«ՋԻՋԻ» ՓԲԸ	https://www.team.gg/ Երևան, Արաբկիր, Մամիկոնյանց փ., 44/4
Ա/Ձ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏՉՅԱՆ	
«ՎԻՈԼԵՏԱ» ՍՊԸ	Երևան, Աջափնյակ, Հալաբյան փ., շ 31, բն. 46
«ԷԴՈ-ՍԱՐՈՒԽ» ՍՊԸ	Երևան, Աջափնյակ, Լենինգրադյան փ., շ 48/1, բն. 24
«ԳԱԶ-ՊՐՈՊԱՆ» ՍՊԸ	Երևան, Տիչինայի, 26
«ՊԱՄ ԸՆՏԱՆԻՔ» ՍՊԸ	https://www.pam.am/ Երևան, Էրեբունի, Տիգրան Մեծի փ., շ 54ա, բն. 10
«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	https://www.armchampagne.am/ Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Թբիլիսյան խճ. 20
«ՍՄՈՔ ՀԱՈՒՍ» ՍՊԸ	Երևան, Ավան, Խուդյակովի 3 նրբ., տ 60ա
«ՎԻ ԱՌ ՄԵԴԻՔԱԼ» ՍՊԸ	Երևան, Նոր Նորք, Սաֆարյան փ., 14/7
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՏՈՒԳԱՆՔ	
«ԱԼԴԱ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	Երևան, Աջափնյակ, Դավթաշեն 4թղմ., 44, բն. 30

«ՅՈՒՆԻՓԵՔ» ՍՊԸ	https://unipack.group/ Երևան, Էրեբունի, Արցախի փ., 46/1
«ՋՈՅՆ» ՓԲԸ	**Երևան, Կենտրոն, Նալբանդյան փ., շ 25ա, բն. 2**
«ՄՈՒԼՏԻ ՏԱԲԱԿ» ՍՊԸ	**https://www.multitabak.am/hy Երևան, Կենտրոն, Արգիշտիի փ. 9**
«ԽԱՔ» ՍՊԸ	**Արարատ, գ.Նարեկ**
«ԴԵԱԳԱ» ՍՊԸ	**Երևան, Էրեբունի, Էրեբունի, շ 34, բն. 62**
«ԲՐԵՆԴԼԻԴԵՐ» Հ/Ձ ՍՊԸ	https://www.brandleader.am/ Երևան, Շենգավիթ, Ն. Շենգավիթ 11 փ., 1/14
«ՋԻՋԻ» ՓԲԸ	https://www.team.gg/ Երևան, Արաբկիր, Մամիկոնյանց փ., 44/4
«ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս» ՍՊԸ	Երևան, Կենտրոն, Այգեստան 9 փ, տ 25/1
«ՄԵԳԱ ՆԵՏ» ՍՊԸ	Լոռի, Վանաձոր, Տիգրան Մեծի պ., շ 63, բն.13
«ԲԻՈԿԱԹ» ՍՊԸ	https://biokat.am/ Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակի 1 նրբ., 1/10
Ա/Ձ ԼՈՒՍԻՆԵ ԹԱՄՐԱԶՅԱՆ	
«ՍԵՐԵՈՆ» ՍՊԸ	Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Ծիծեռնակաբերդի խճղ., 1/2, բն. 305-307տնք
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ	
«ԱՆԱՄԵԼ» ՍՊԸ	Երևան, Էրեբունի, Նոր Արեշ 24 փ., տ 53
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ ՏՈՒԳԱՆՔ	
«ՋՈՅՆ» ՓԲԸ	Երևան, Կենտրոն, Նալբանդյան փ., շ 25ա, բն. 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. 1034-11001 «Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակում և վերահսկողություն» միջոցառում (հազար ՀՀ դրամ)

N	Անվանումը	Տնտեսագիտական հոդված	Ճշտված պլան	Փաստացի դրամարկղային ծախս	Բյուջեի կատարման %
	Ընթացիկ ծախսեր		594,371.8	592,938.5	99.8
1	Աշխատողների աշատավարձ և հավելավճար	**4111**	442,585.2	442,585.2	100.0
2	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարումներ	**4112**	41,700.0	41,700.0	100.0
3	Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	**4113**	27,110.8	27,110.8	100.0
4	Էներգետիկ ծառայություններ	**4212**	8,505.5	8,449.8	99.3
5	Կապի ծառայություններ	**4214**	3,776.0	3,412.7	90.4
6	Ապահովագրական ծախսեր	**4215**	518.0	518.0	100.0
7	Գույքի և սարքավորումների վարձակալություն	**4216**	44,527.8	44,527.8	100.0
8	Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	**4222**	11,163.1	11,149.3	99.9
9	Համակարգչային ծառայություններ	**4232**	1,254.0	1,254.0	100.0
10	Տեղեկատվական ծառայություններ	**4234**	831.6	831.6	100.0
11	Կառավարչական ծառայություններ	**4235**	990.0	990.0	100.0

N	Անվանումը	Տնտեսագիտական հոդված	Ճշտված պլան	Փաստացի դրամարկղային ծախս	Բյուջեի կատարման %
12	Ներկայացուցչական ծախսեր	**4237**	1,282.7	1,282.7	100.0
13	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	**4239**	3,662.3	2,898.0	79.1
14	Մեքենաների ընթացիկ նորոգում և պահպանում	**4252**	2,098.0	1,924.0	91.7
15	Գրասենյակային նյութեր և հագուստ	**4261**	2,090.2	2,053.8	98.3
16	Տրանսպորտային նյութեր	**4264**	1,305.0	1,299.0	99.5
17	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	**4267**	321.8	317.8	98.8
18	Պարտադիր վճարումներ	**4823**	649.8	634.1	97.6

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԳՐԱՖԻԿ



ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4
Հեռ.՝ (+37460) 830-840
Էլ. փոստ՝ info@competition.am
Կայք՝ https://competition.am/hy/
Ֆեյսբուքյան էջ՝ Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով